


# ՏԻՐԱՊԵՏԵՆՔ

## ՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻՆ

11956

Թարգմ. Հ. Մ.



1932 թ.

338.4

Բ-26

ՀԱՅԿԵՆԻ  
ԳՐԱԳՐԱԿԱՆ  
ԻՆՏԵՆՏԱ  
ԸՆԴՈՒՆԱԿՆԵՐ  
Հանրային հայրենիքի  
ԿԵՆՏՐՈՆ  
СССР

12 0 0 1

Մ. ՔԱՅՏԱԼՍԿԻ

CA 52  
2

# ՏԻՐԱՊԵՏԵՆՔ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻՆ

ИНСТИТУТ  
МАТЕМАТИЧЕСКИХ  
МАШИНОСТРОЕНИЯ  
и  
Автоматизации  
СССР

## ԱՌԱՋԻՆ ԽՆԴԻՐԸ ԼՈՒԾՎԱԾ Ե

«Տիրապետելով արտադրութեան բոլոր միջոցներին, հասարակականորեն, պլանավոր կերպով կառավարելու համար, հասարակութիւնը պետք է վոչնչացնէ մինչև այժմ թագավորող մարդկանց ստրկացումը հենց նրանց սեփական արտադրութեան միջոցներով: Ինքն ըստ ինքեան հասկանալի չէ, վոր հասարակութեան այդպիսի ինքնազատագրումը չի կարող տեղի ունենալ, յեթե չի ազատագրվում նաև նրա յուրաքանչյուր առանձին անդամը: Այս ի նկատի ունենալով, արտադրութեան հին ձևը պետք է հիմնովին փոխվի, հետևապես նաև պետք է շքանա աշխատանքի հին բաժանումը, վորը ձնշոււմ է թե ամբողջ հասարակութեանը և թե նրա առանձին անդամին: Աշխատանքի բաժանման փոխարեն պետք է առաջանա արտադրութեան այնպիսի կազմակերպում, վորի ժամանակ, մեկ կողմից վոչ վոք չկարողանա ուրիշի վրա զցել արտադրողական աշխատանքին մասնակցելու իր բաժինը, իբրև մարդկային գոյութեան բնական պայմանը, իսկ մյուս կողմից—արտադրողական աշխատանքը, փոխանակ ստրկացման միջոց լինելու, դառնա ազատագրութեան միջոց, յուրաքանչյուր անհատի հնարավորութիւն տալով բազմակողմանի կերպով զարգացնելու և հայտնաբերելու իր թե ֆիզիքական և թե մտավոր ընդունակութիւնները: Հետևապես, աշխատանքը ծանր պարտականութիւնից կվերածվի բավականութեան: Այս բոլորը ներկայումս ամենևին ֆանտազիա չէ, վոչ ել լ ո կ բ ա դ ձ ա ն ք: Արտադրական ույժերի ժամանակակից զարգացման պայմաններում բավական է արդեն արտադրութեան այն մեծացումը, վորն ստացվում է հենց արտադրողական ույժերի համայնացման փաստից, բավական

ե վերացնել կապիտալիզմին հատուկ՝ արտադրութեան նորմալ ընթացքի զեղբարութիւններն ու խոչնդոտները, մթերքների և արտադրութեան միջոցների անողուտ վատնումը, վորպեսզի, բոլորը մասնակցելով աշխատանքին, հնարավոր լինի աշխատանքի ժամանակը կրճատել մինչև մինիմում»:


Արտադրութեան սոցիալիստական կազմակերպութեան այս սկզբունքը, վորը ձևակերպել է Ենդելսոն իր «Անտի-Դյուրինգ»-ում, այժմ ԽՍՀՄ-ում իրագործում են սոցիալիստական եկոնոմիկայի միլիոնավոր կառուցողները:

Այժմյան պայմաններում աշխատանքի սոցիալիստական կազմակերպութեան ամենաբարձր ձևը սոցիալիստական մրցումն է, վորի հիմքն է կազմում մարդկանց ինքնազատագրումը հենց նրանց սեփական արտադրութեան միջոցներով: Սոցիալիստական մրցումն այժմ ընդգրկում է մեր յերկրի բոլոր բանվորների կեսից ավելին, ամեն ոք նվաճելով վոչ միայն բանվորների նոր հարյուր հազարներ, այլ և կոլխոզնիկներին մասսաներին: 1929 թվականի հոկտեմբերին յուրաքանչյուր տասներորդ արդյունաբերական բանվորը հարվածային էր, նույն թվականի դեկտեմբերին, — յուրաքանչյուր վեցերորդը, 1930 թվ. սեպտեմբերին, Համիովուսի ք) Կենտրոնի ղեմումը հրապարակելուց հետո, հարվածային շարժումն այնպիսի հզոր թափ ստացավ, վոր արդեն 1931 թվականի սկզբին ԽՍՀՄ յուրաքանչյուր յերկրորդ բանվոր հարվածային է հանդիսանում:

Սոցիալիստական մրցությունը դարձել է աշխատանքի այնպիսի կազմակերպման հզոր միջոց, վորպիսին բոլորովին անյերևակայելի յե կապիտալիզմի պայմաններում և վորպիսին յուրահատուկ է միայն այն հասարակութեան, վորը բուն է զարգացման սոցիալիստական ուղին — աշխատանքի կազմակերպումը պրոլետարիատի գիտակցական դիսցիպլինայի հիմունքով:

Միլիոնավոր պրոլետարներ արդեն սովորել են գիտակցաբար վերաբերվել դիպի իրենց աշխատանքի արտադրողականութեան բարձրացման համար, հերոսաբար կռվում են յուրաքանչյուր տոնն անուխի, մետաղի, հացի և նավթի համար, նրանք մտածում են վոչ թե անձնապես իրենց, այլ իրենց յերկրի մասին:

Անորինակ արդիւնաբերութեան սոցիալիստական շինարարութեան և կապիտալիստական զիտակցական վերաբեր-



50440-ախ

36091-66

մունքի բարձր աստիճանը կազմում են աշխատանքի սոցիալիստական կազմակերպման հիմքը: Այդ տեսակ գիտակցական դիսցիպլինայի վրա հիմնված աշխատանքն իսկապես վոր դառնում է ազատագրող աշխատանք, դա թույլ է տալիս լայնորեն զարգացնել արտադրական ույժերը սոցիալիստական եկոնոմիկայի շինարարութեան համար, նա աշխարտադրողականութեանը հասցնում է չտեսնված բարձրութեան: Իսկ «աշխատանքի արտադրողականութեանն — այդ, վերջին հաշիվով, ամենակարեւորն է, ամենազխաւորն է նոր հասարակարգի հաղթանակի համար» (Լենին):

### ՄԵՔԵՆԱՅԻ ՆՈՐ ԾՆՈՒՆԴԸ

Մեր անտեսութեանը զարգանում է չտեսնված և կապիտալիզմի համար անհնարին տեմպերով: Ութը տարվա ընթացքում մենք անուխի հանումը բարձրացրել ենք վեց անգամ, այն ժամանակ, յերբ Անդլիան ավելացրել է ընդամենը յերկու անգամ: Չուգունի ամսական միջին հալումը մեզանում ավելացել է քառասուն յերեք անգամ, իսկ Անգլիայում — յերեք անգամ: Տուրքիաների շինարարութեան մեջ մենք վեց տարում անցել ենք այն ճանապարհը, վորը կապիտալիզմի առաջավոր յերկրները կարող էին անցնել 25 տարվա ընթացքում:

Բայց յիթե մի հայացքով հնարավոր չէ ընդգրկել մեր ամբողջ շինարարութեանն և նրա հսկայական հաջողութեանն: Ներք, ապա կարելի յե բերել մի քանի մասնակի որինակներ, վորոնք ավելի քան համոզիչ կերպով ապացուցում են աշխատանքի սոցիալիստական կազմակերպման առավելութեանները: Հանրահայտնի որինակը Ինսպրուստոյն է: Ինսպրուստոյի կառուցողները տարել են բետոնի կառուցվածքի համաշխարհային ռեկորդ: 1930 թվականին մի բանվորական սեզոնի ընթացքում նրանք գցել են 500 հազար խորանարդ մետր բետոն: Թե ինչպես է այդ հաջողվել նրանց, թող պատասխանն ոտար յերկրացին, ոտար իստեղիգետը, գերմանական պրոֆեսոր Շլեզինգերը: Բ՛լ լրինում արած իր ղեկուցման մեջ նա ասել է. — «Մարդիկ հավանում են վերջին գրոշները և կառուցում Ինսպրուստոյ ելեքտրոկայանը, վորն ամենահսկայականն է աշխարհում: Յես զրուցեցի զլսավոր կառուցողի և ամերիկական ու

գերմանական մասնազետները հետ,—նախագծի առթիվ: Նրանց կարծիքն այն է, վոր աշխարհում և վոչ մի կայան չի կառուցվել այդպես լայնորեն, հիմնովին, այդպիսի դարմանալի ճշտութեամբ, այդպես պլանաչափ և անդնդհատ... Յես շատ հեռու յեմ կոմունիզմից: Բայց յես այնուամենայնիվ պիտի խոստովանեմ, վոր պլանային տնտեսութեանը գոյութեան ունի միայն ԽՍՀՄ-ում: Հնգամյա պլանի մասին հաճախ խոսում են արհամարանքով, իբր թե նա մնում է թղթի վրա: Դա բոլորովին ճիշտ չէ: Յեթե ուսները հինգ տարվա ընթացքում իրականացնեն իրենց ծրագրի թեկուզ մեկ յւրրորդ մասն,—իսկ այդ անկասկած նրանց կհաջողվի,—նրանք համարյա թե կըհասնեն ամեն որ հարյուր... հազարավոր տրակտորներ ստանալ նրանք մեզանից կսնցնեն»:

Ի դեպ, նկատենք, վոր պրոֆեսոր Շելդինգերը «մի փոքր» սխալվել է. գյուղատնտեսական մեքենայաշինարարութեան մեջ մենք այս տարի արդեն համարյա յերկու անգամ գերազանցում ենք Ամերիկայից (1930 թվականին մենք նրանից յես եյինք մնում 1,7 անգամ):

Մի այլ հանրածանոթ որինակ, վորը պատկերացնում է աշխատանքի սոցիալիստական կազմակերպման առավելութեանները,—գա Մագնիտոստրոյում, Ուրալ գետի վրայով պատնեշի կառուցումն է: Ամերիկացիների նախագծի համաձայն, պատնեշը պետք է կառուցվեր 120 որում, շինարարութեան վարչութեան պլանի համաձայն—90 որում, իսկ իրենց, բանվորների հանդիպական պլանով—75 որում: Պատնեշը կառուցվեց 71 որում:

Ահա ևս մի որինակ—Ուկրաինայի Կոմկուսի (բ) 9-րդ համագումարում ընկեր Ռոզենզոլցի բերած թվական տեղեկանքը ԽՍՀՄ աղյուսի գործարանների աշխատանքի մասին: 1912 թվականին Ռուսաստանի աղյուսի գործարանները տարեկան տվել են 2 միլիոն հատ աղյուս. 1930 թվականին այդ նույն գործարանները, նույն հիմնական կապիտալով, տվին 60 տոկոսով ավելի, ըստ վորում թե առաջ և թե այժմ աշխատանքը կատարվում է յերկու հերթով. խնդիրը միայն աշխատանքի և արտադրութեան այլ ձևի կազմակերպման մեջ է կայանում:

Տեխնիկայի յենթարկումը գիտակցական, սոցիալիստական

գիտելիքինային՝ բարձրացնում է մեքենայի աշխատանքի քանակական արդյունքը մինչև այն աստիճան, վորը կապիտալիզմն յերազուցում է չի տեսել: Այս պատճառով, թեև մեզ մոտ գործադրվում է թղթի նույն մեքենան, ինչ վոր Ֆինլանդիայում, նույն եկակավատորն, ինչ վոր Ամերիկայում, նույն մանածագործական դաղդյահը, ինչ վոր Անգլիայում, սակայն այդ մեքենաներն ազատ աշխատող պրոլետարի ձեռքում կարծես թե նոր են ծնվում, ստանում ինչ-վոր նոր հատկութեաններ: Այս հատկութեանները մեքենան ձեռք է բերում միայն այն բանի շնորհիվ, վոր նա ծառայում է պրոլետարիատին. Կապիտալիզմը խլում է այդ հատկութեանները մեքենայից, բնութեան իշխանութեանից մարդուս հեղափոխական ազատագրման այս գործիքը վերածելով աշխատավորների սարկացման գործիքի: Իսկ մենք գործնականում ապացուցում ենք, վոր մեքենան կարող է ծառայել իբր աշխատանքի ազատագրման գործիք: Մեր գործն—յուրաքանչյուր քայլափոխում նախաձեռնել այն հսկայական հնարավորութեանները, վորոնք գտնվում են մեր իրավակարգի եյութեան մեջ,—վորպեսզի մեքենան լիակատար չափով յենթարկենք աշխատավորին:

**ՃԻՆ ՏԵԽՆԻԿԱՆ ՆՈՐ ՀԻՄՈՒՆԲՈՎ**

Լակինի անվան Փարրիկայի (Վլադիմիր քաղաքի մոտ, Ունդու կայարանին կից) բանվորներն աշխատանքի կենտրոնական ինստիտուտի ոգնութեամբ առաջին անգամ մտցրին իրենց մոտ այսպես կոչված՝ ֆունկցիոնալ սխեմը, վորը մինչև այժմ հայտնի չեր և վոչ մի մանածագործական արտադրութեան մեջ: Այժմ ֆունկցիոնալ սխեմը մտցվում է ԽՍՀՄ մանածագործական ու ջուլհակային Փարրիկաների մեծամասնութեան մեջ, վորպես մի սխեմ, վորը նշանակալից չափով բարձրացնում է աշխատանքի արտադրողականութեանը: Փունկցիոնալ սխեմի նշանակութեանը կայանում է վոչ միայն նրանում, վոր նա բարձրացնում է աշխատանքի արտադրողականութեանը, այլ և նրանում, վոր նա հիմք է ծառայում արտադրութեան տեխնիկայի մեջ հետագա հեղափոխական փոխոխութեանները համար: Յեվ հենց դր՝ ծի այս կողմն է, վոր մենք պիտի աշխատենք մանրամասնորեն վերլուծել:

Փռնկցիոնալ սիստեմի եյությունը կայանում է նրա-  
 նում, վոր այն պարտականությունները, վորոնք առաջ կա-  
 տարում եր մեկ բանվոր, դասավորված են ամենապարզ մասե-  
 րի և բաժանված են մի քանի բանվորների միջև: Զուլհակուհու  
 աշխատանքը բաժանված է չորս ֆունկցիաների,— լարող, կտրող,  
 լցնող և բաց թողող: Թվում է, թե այստեղ չկա և վոչ մէ ա-  
 ոանձին տեխնիկական կատարելագործություն— ուղղակի աշ-  
 խատանքի լավ կազմակերպումն է: Բայց հենց բանն էլ նրա-  
 նումն է, վոր բացի աշխատանքի լավագույն կազմակերպումից  
 (աշխ. արտադրականությունը բարձրացել է, Լակինի ֆաբրիկա-  
 յուն ինքնարժեքն ավելի ցածր է, քան տրեստի բոլոր մյուս  
 ֆաբրիկաներում, բրակը պլանից ցածր է), բացի նրանից, վոր  
 բանվորն ամենալավ կերպով է հարմարվել մեքենային, ֆունկ-  
 ցիոնալ սիստեմը բանվորին մղում է ավելի լավ գործադրելու  
 մեքենան: Ահա մի հասարակ որինակ նույն Լակինի ֆաբրի-  
 կայի պրակտիկայից.— Զուլհակուհին, վորն առաջ իր աշխա-  
 տանքի մեջ միացնում եր 4 գործողություններ, իրկինբրի մեջ  
 յեղած տարածությունները մաքրում եր վրձինով: Փունկցիո-  
 նալ սիստեմի ժամանակ այս գործողությունը կատարում է մի  
 հատուկ բանվորուհի: Յերբ այս մաքրող բանվորուհին պետք  
 է աշխատեր 24—36 դադդյահը մաքրել վրձինով, իսկույն  
 և յեթ թե նրա և թե տեխնիկական պերսոնալի առաջ բարձ-  
 րացալ մի հարց— ինչպես թեթևացնել, պարզացնել աշխա-  
 տանքը: Յեվ դուրս յեկավ շատ հասարակ բան. մի վրձինի փոխա-  
 րեն սկսեցին բանեցնել վրձինների մի շարք, փոցխի նմա-  
 նությամբ: Աշխատելն ավելի հեշտացավ: Գործողության  
 բաժանումը մասերի՝ թույլ ավեց ավելի մոտիկից նայել յու-  
 րաքանչյուր առանձին, մասնակի գործողության, վորն  
 առաջ կորչում եր մյուս աշխատանքների ընդհանուր զանգվա-  
 ծում: Հնարավորություն ստեղծվեց թեթևացնել, բարելավել  
 և տեխնիկայես կատարելագործել յուրաքանչյուր առանձին,  
 մանր գործողությունը: Այսպիսով ֆունկցիոնալ սիստեմը հան-  
 դիսացավ տեխնիկական հատաճաղիմության միջոց: Այդ ա-  
 ռաջադիմությունն ամենից առաջ ուղղվում է դեպի արտադ-  
 րության պրոցեսի բարելավումը և հենց յուրաքանչյուր բան-  
 վորի շահը, վորը (բանվորը) կատարում է այս կամ այն գոր-  
 ծողությունը (ֆունկցիոններ): Յեվ այդ հասկանալի յե: Ար-  
 տադրության պրոցեսի բաժանումը, նրա դասավորումը պարզ

գործողությունների՝ աշխատանքի ամբողջ պատկերը դարձնում է  
 ալնքան պարզ, այնքան հասկանալի, վոր յուրաքանչյուր  
 տեխնիկայես թույլ տեղը ցայտուն կերպով աչքի յե ընկնում:  
 Լակինի անվան ֆաբրիկայում «Ֆունկցիոնալկան» ներգոր-  
 ծեց միաժամանակ յերկու ուղղությամբ. մի կողմից նա թույլ  
 տվեց լայն չափով ոգտագործելու վոչ վորակյալ բանվորների  
 աշխատանքը, իսկ մյուս կողմից ստիպեց բարձրացնել բոլոր  
 բանվորների ու յենթավարպետների տեխնիկական մակարդա-  
 կը, քանի վոր առանձին, հասարակ գործողության վրա կա-  
 րող է աշխատել միանգամայն քիչ վորակյալ բանվորը,  
 քայց սիստեմը պահանջում է յուրաքանչյուր բանվորից ու  
 յենթավարպետից, վորպեսզի նրանք պարզ պատկերացնեն ամ-  
 բողջ աշխատանքի պրոցեսն և վորպեսզի վոչ միայն  
 լավագույն կերպով հարմարվեն սիստեմին, այլ և անընդհատ  
 կերպով կատարելագործեն այն՝ աշխատանքի պայմանները  
 հեշտացնե ու է բարելավելու համար: «Փունկցիոնալկան» էլ  
 հենց գտնվում է այդպիսի կատարելագործման պրոցեսում,  
 նա հետու յե ինչ-վոր մեռյալ ձևերից: Այս սիստեմը գործա-  
 դրող ֆաբրիկաներն այժմ զբաղված են այն խնդիրների լուծ-  
 մամբ, վորոնք կապված են նոր սիստեմն ամենալավ գործա-  
 դրելու հետ՝ ի շահ բանվորների. բավական է հիշել, այն  
 դյուտարարական աշխատանքը, վորն այժմ կատարվում է  
 «մակուեյկի» (ЧЕЛНОК) (կատարելագործման համար, բերանով  
 կատարվող գործողությունը փոխարինելով ապտամատի):  
 Կապիտալիստական արտադրության մեջ, ինչպես ասում  
 է Մարքսը, «վոչ թե բանվորն է գործադրում աշխատանքի պայ-  
 մանները, այլ աշխատանքի պայմանները գործադրում են բան-  
 վորին»: Սա նշանակում է, վոր բանվորն ստիպված է հար-  
 մարվել մեքենայի կառուցվածքին և ընթացքին, նա գոյու-  
 թյուն ունի մեքենային կից իբրև նրա մի մասը: Սոցիալիս-  
 տականորին կազմակերպված արտադրության մեջ ընդհակա-  
 կառուկն է: Բանվորը հնարավորություն ունի մեքենան հար-  
 մարեցնելու իրեն, այսինքն նրա կառուցվածքն ու ընթացքը  
 հարմարեցնել այնպես, վորպեսզի դրանք թեթևացնեն աշխա-  
 տանքը: Փունկցիոնալ սիստեմը մի կարևոր քայլ է այդպի-  
 սի հարմարեցման ճանապարհին: Այս հարմարեցումն, ինչպես  
 մենք տեսնում ենք, առաջ է զարկս վոչ մեքենայի շարժման  
 դանդաղելուց, վորով խորտակվում է հենց նրա հիմունքը: Բո-

լորովին վոչ: Բանվորն, ընդհանրապես, այդ մեքենան հարմարեցնում է իրեն, լայնացնելով նրա արտադրողականութունը: Սոցիալիստական արտադրութունը բանվորին հնարավորութուն է տալիս բանալու մեքենայի գաղտնիքը: Քանի դեռ բանվորը խաղում է մեքենայի մեռած պտուտակի դերը,—նա նրա ստրուկն է: Բայց հենց վոր բանվորն սկսում է հասկանալ իր տեղը մեքենայի մոտ, նա դառնում է այդ մեքենայի լիակատար տերը: Այս պատճառով «Փունկցիոնալկան» պետք է ընդունել վոչ թե իբրև մի վորևե ավարտված բան, վորը միանգամայն պատրաստ է, այլ վորպես տեխնիկայի հեղափոխական զարգացման մի միջոց, վորով ավելի հեշտ է տիրանալ այդ բերդին:

### ՔԱՆԱԴԱՐՅ ԴԵՊԻ ԱՎՏՈՍԱՍԸ

Մանածագործական արդյունաբերության մեջ ֆունկցիոնալ սխտեմը մեկն է այն բազմաթիվ որինակներից, թե ինչպես կապիտալիստական տեխնիկայի սոցիալիստական գործադրութունը փոխում է հենց նրա դեմքը, ավելի ճիշտ՝ առաջին անգամ բացում է տեխնիկայի իսկական հեղափոխական դեմքը: Սոցիալիստական շինարարության պրակտիկան տալիս է այդպիսի որինակների շատ մեծ քանակութուն, բայց մենք ընտրեցինք ֆունկցիոնալ սխտեմը նաև նրա համար, վոր նա պարզորոշ ցույց է տալիս այն հիմնական գիծը, այն գլխավոր ուղղությունը, վորով ընթանում է տեխնիկայի հեղափոխական զարգացումը:

Այդ գիծը—արտադրության պրոցեսի ավտոմատիզացիան է: Ժամանակակից մանածագործական մեքենան արդեն ինքնին ներկայացնում է ավտոմատիզացիայի շատ բարձր աստիճան: Ամբողջ պրոցեսսն անցնում է ավտոմատ կերպով, իսկ ջուլհակուհին պետք է միայն հսկե, վորպեսզի չլինի կորուստ, կտրվածք և այլն: «Փունկցիոնալկան» ավելի ևս պարզացնում է ջուլհակուհու աշխատանքը, բաժանելով այն չորս ամենահասարակ, մասնակի գործողությունների: Փունկցիոնալ սխտեմը վոչ միայն աշխատանքի պրոցեսսը բաժանում է հասարակ գործողությունների, այլև բանվորների առաջ խնդիր է դնում այդ գործողություններից յուրաքանչյուրի վերաբերյալ հնա-

բել մարդկային աշխատանքը մեքենայով փոխարինելու յեղանակներ: Լցնողը, վորն այժմ կատարում է ջուլհակուհու աշխատանքի միայն մի մասը—«մակուլիկ» լիցքը,—ստիպված կլինեք «համբուրել» չորս անգամ ավելի «մակուլիկներ», քան թե ջուլհակուհին,—յեթե լիցքը կատարվեր բերանով: Լակինցիներն արգելում են «համբուլելով» լիցքը, վորն ուղղակի դեպի սուրբերկույտը է տանում: Վորովհետև այն ավտոմատները, վորոնք հնարված են արտասահմանում և կատարելագործված մեղանում, տալիս են թելի կտրվելու մեծ տոկոսներ, այս պատճառով լակինցիները սովորական «համբուլյային» մակուլիկներին հարմարեցրել են մի առանձին չապրաստ, վորը թույլ է տալիս խուսափել թելը բերանով փչելուց: Սակայն կատարելագործված, ավտոմատ կերպով լցվող «մակուլիկ», կամ անմակուլիկ ջուլհակային զաղպախի դյուտարման խնդիրն այժմ մանվածքային արդյունաբերության բանվորների ու տեխնիկներին առաջ դրված է իր ամբողջ սրությամբ: Այս է առաջադրել նրան Փունկցիոնալ սխտեմը:

Արտադրության պրոցեսսը, վորը բաժանված է հասարակ ոպերացիաների, թույլ է տալիս վորակյալ բանվորական ուլժի փոխարեն գործադրել ամենահասարակ բանվորական ուլժի: Ի՞նչ կաներ կապիտալիստը, յեթե նրա ձեռքում այդպիսի հնարավորութուն չլինե: Նա իսկույն և յեթ հասակավոր, վարժված բանվորներին կփոխարիներ յերեխաներով, կանանցով և նույն իսկ կաղ մարդկանցով (Փորդի մոտ աշխատում են կուլյերն ու անվոտ մարդիկ): Չե՞ վոր մանուկներին ու կաղերին կարելի չէ քիչ վճարել: Դա ավտոմատիզացիայից ավելի ձեռնատու է: Ավելին, կապիտալիզմն այժմ ցանկութուն է հայտնաբերում «յետ տալ» ավտոմատիզացիան: Նշվում են տեխնիկայի դեմ արշավելու ուրվագծերը: Դրա իմաստն այս է—մեքենան չափազանց շատ է արտադրում և չափազանց արագ է դուրս մղում բանվորներին, այսինքն պակասեցնում է սպառողների քանակն և միաժամանակ ավելացնում է սպառման միջրեքների քանակութունը: Այստեղից—յերկյուղ և շփոթութուն ավտոմատիզացիայի աճման հանդեպ:

Իսկ ի՞նչ ենք անում մենք, յերբ մեղ հաջողվում է բանվորի պարզացրած աշխատանքը փոխարինել մեքենայով: Մենք աշխատում ենք «աշխատանքի պայմանները հարմարեցնել բանվորին», այսինքն ավտոմատիզացիան ավելի առաջ մղել,

հասցնել նրան մինչև տեխնիկապես հնարավոր սահմաններ, այնպես, վորպեսզի ամենամեծ չափով թեթևացնել բանվորի աշխատանքն և կրճատել նրա պարտադիր աշխատանքի ժամանակը: Ահա թե ինչու մենք իրավունք ունենք ասելու, վոր տեխնիկան պատկանում է մեզ և միայն մեզ: Սրտադրութայն միայն սոցիալիստական կազմակերպումն է նպաստում տեխնիկայի լիակատար ոգտագործման, վորի նպատակն է մեքենայի վրա կատարվող մարդկային աշխատանքը փոխարինել մարդու հսկողութայն՝ մեքենայի վրա:

### ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԻ ԲՈ ԱՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Լաիկների անվան Ֆարրիկայի, ինչպես նաև հարյուրավոր ու հազարավոր ձեռնարկությունների փորձից մենք տեսնում ենք, վոր աշխատանքի պարզացումն, այսինքն նրա բաժանումն ամենապարզ գործողությունների, բանվորների առջև դնում է մի նոր խնդիր,—արտադրութայն ամբողջ պրոցեսը բարձրացնել ուրիշ ձևով, ավելի խորը և բազմակողմանի կերպով: Յեթե առաջ շուրհակուհին պետք է լավ գիտենար միայն իր շուրհակային դազգյահը, ապա այժմ նա պարտավոր է գիտենալ արտադրութայն ամբողջ պրոցեսը, թեև նրա սեփական, ուղղակի պարտականությունները դարձել են շատ ավելի պարզ: Յեթե առաջ ամխահատը հանքահորում պետք է միայն ունենար փորձառություն և ուշիմություն, վորպեսզի ավել շատ ածուխ քանդեր և զգար ածուխի ծածկի իջնելն, ապա այժմ ամխահատը մեքենայացված զանգվածում պետք է գիտենա մեքենայացման ամբողջ սիստեմը,—թե սյուններ կանգնեցնելու յեղանակը, փորող մեքենայի աշխատանքը, թե կոնվեյերի սեղափոխությունը: Միևնույն բանը կարելի չէ ասել կարի Ֆարրիկայի կոնվեյերում, ոետինի արտադրութայն մեջ, ելքարոտեխնիկական գործարանում և այլուր աշխատող բանվորուհու համար:

Ինչո՞ւ չե այդ այդպես: Վորովհետև կոնվեյերն ու «Ֆունկչիոնական», պարզացնելով յուրաքանչյուր առանձին բանվորի Ֆունկչիան, միևնույն ժամանակ ամրապնդում են մի ու պերացիայի (գործողութայն) և ամբողջ ձեռնարկութայն փախադարձ կախումը: Որինակ, յեթե առաջ հանքահորի մակե-

րեւութի վրա աշխատող բանվորը վոչ մի գործ չուներ հանքահորի խորքում աշխատող առանձին ամխահատի հետ, ապա այժմ վերևի բանվորի և դետնի տակ փորող մեքենան վարողի միջև գոյություն ունի սերտ կապ: Բավական է, վոր հսկայական, մեքենայացված, յերկու հարյուր մետրանոց զանգվածի մեքենավարը մի քանի ժամով կանգնեցնի մեքենայի ընթացքը—և դա անխուսափելիորեն կաղդի ածուխը դուրս գալու և հետևապես, վերևում աշխատող բանվորի աշխատանքի վրա: Ուտի այժմ յուրաքանչյուր բանվորի համար առանձնապես կարևոր է հասկանալ այն նորը, ինչ վոր արտադրութայն աշխատանքի կազմակերպման մեջ մտցրել են ավտոմատն ու կոնվեյերի ժապավենը: Ուժեղացել է մեքենայացված արտադրութայն՝ առաջին հայացքից ամենահեռավոր ոպերացիաների փոխադարձ կախումը:

Սյն ձեռնարկությունների թիվը, վորտեղ տեխնիկական կատարելագործությունն ընթանում է հենց ավտոմատիզացիայի և ֆունկչիաների բաժանման ուղղությամբ—որեցոր անում է: Հիշեք ամուխի արդյունաբերությունը, մանածագործական արտադրությունը, սրակտորի և ավտոմոբիլների արտադրությունները, գյուղատնտեսական մեքենայաշինարարությունը և կելտրոտեխնիկական, կոշկեղենի և կարի արտադրությունը և այլն: Առանձին գործողություններ կատարող բանվորի համար—իսկ այդպիսի բանվորները մեզանում հետզհետե շատանում են,—իր գործողութայն վոչ բարդ գիտելիքին տիրապետելուց հետո ամենաառաջին խնդիրը հանգիստանում և ամբողջ տեխնիկական պրոցեսին խորապես տիրապետելը: Ավտոմատիզացիան ու կոնվեյերը, վորոնք գործադրվում են սոցիալիստական ձեռնարկութայն մեջ — մեծ չափով նպաստում են դրան: Մենակ աշխատող դերձակից պահանջվում է մեծ վորակե

կարի Ֆարրիկայում աշխատող բանվորից պահանջվում է շատ քիչ զուտ դերձակային գիտելիքներ և վարժություններ: Սակայն այս բոլորովին չինչանակում, վոր սոցիալիստական Ֆարքիկայում կարի կոնվեյերում աշխատող բանվորը միանգամայն լավ է, յեթե նա գիտե կարել մեքենայի վրա: Խորհրդային կարի Ֆարրիկան, ուր արտադրությունը կոնվեյերի սիստեմով է կատարվում, ազատել է բանվորին ամբողջ դերձակային արվեստն ուսումնասիրելու անհրաժեշտությունից, բայց ազատել նրա համար, վորպեսզի նա ուսումնասիրի արտադրությունը

կառավարելու արվեստը: Գերձակային արվեստի ուսումնասիր-  
 բությունը դերձակին կոթնեցնում եր սեղանին, կառավարման  
 արվեստի ուսումնասիրությունը նշանակում է, վոր բանվորն  
 առաջին անգամ մի կողմ է անցնում դազգյահից, վորին նա  
 առջ ամբայված եր—և աշխատում է զիտել դազգյահները,  
 մեքենաների ամբողջ սիստեմը: Այս պատճառով տեխնիկային  
 տիրապետելը—դա շատ ավելի մեծ բան է, քան թե նեղ մաս-  
 նագիտության ուսումնասիրությունը: Ավտոմատն ու կոնվեյե-  
 րը բանվորին ազատում են պրոֆեսսիոնալ իդիտիզմից, ինչպես  
 անվանել է Մարքսը արվեստի սահմանափակության այն դրությու-  
 նը, վորին դատապարտված է բանվորը, վորը վոչինչ չզիտե բացի  
 իր մասնագիտությունից: Բանվորը հնարավորություն է ստա-  
 նում բավարարելու ղեպի բազմակողմանի զարգացումն ունե-  
 ցած իր ձգտումը և այս ձգտումը խրախուսվում է մեքենայի  
 զարգացմամբ: Բայց կապիտալիզմն իր մեքենայական արտա-  
 դրությամբ, բանվորի մեջ ձգտում ստեղծելով ղեպի բազմա-  
 կողմանի զարգացում, միաժամանակ խլում է պրոլետարից այդ  
 ձգտումը բավարարելու հնարավորությունը: Բոլորովին ուրիշ  
 է դրությունը սոցիալիստական արտադրության մեջ:

Դեպի բազմակողմանի զարգացումն յեղած բնական ձգտ-  
 ւումը, վորը յերևան է գալիս պրոֆեսսիոնալ իդիտիզմի»  
 լիկվիդացիայի հետ միասին, կապիտալիզմը խեղում է իր  
 չափից դուրս շահագործումով: Ֆորդի բանվորը չի կարող գործ  
 անենալ զարգացման խնդրի հետ: Նա հազիվ կարողանա քնել,  
 հանգստանալ: Իսկ սոցիալիստական ձեռնարկությունը տալիս  
 է բոլոր պայմաններն ու հնարավորությունները՝ բազմակող-  
 մանի զարգացման համար, իսկ սա հեշտացնում է բանվորի  
 համար ամբողջ արտադրական պրոցեսսին տիրապետելու գոր-  
 ժը: Տիրապետելով ամբողջ արտադրական պրոցեսսի գիտու-  
 թյան, բանվորը հնարավորություն ունի գործադրել այդ գի-  
 տությունը, վորպեսզի կատարելագործե ու թեթևացնե այն  
 ապերացիան, վորով նա ղբաղված է, նրա ծանրությունը փո-  
 խադրե մեքենային: Արտադրության միայն սոցիալիստական  
 կազմակերպումը թույլ է տալիս միլիոնավոր մարդկանց—վո-  
 բոնք ուղղակիորեն շահագորդուած են աշխատանքի ծանրու-  
 թյունը մեքենայի վրա փոխադրելու մեջ,—նույնպես ուղղա-  
 կիորեն մասնակից լինել այն նոր հարմարեցումների գյուտար-  
 ման, վորոնք թեթևացնում են մարդու աշխատանքը:

Արդյոք ամեն տեսակ կոնվեյերը թեթևացնում է մարդու  
 աշխատանքը: Վոչ, միայն աշխատանքի սոցիալիստական կազ-  
 մակերպման վրա հիմնվածը: Խորհրդային ձեռնարկության  
 կոնվեյերն է Ֆորդի կոնվեյերի միջև կա մի հսկայական սկզբուն-  
 քային տարբերություն: Նրանց միջև կա մի այնպիսի սահ-  
 ման, վորից կապիտալիզմն անցնել չի կարող՝ ըստ իր բնու-  
 թյան: Մեր կոնվեյերը պրոլետարիատի ձեռքում ծառայում է  
 իբր սոցիալիստական տնտեսություն կառուցելու միջոց և վոչ  
 թե մի միջոց, վորով շահ է ստացվում հոգուտ առածին կապի-  
 տալիստի:

Հայտնի յե, վոր Ֆորդի բանվորները մեռնում են ավելի  
 վաղ հասակում, քան թե վոչ-կոնվեյերային արտադրություն-  
 ների բանվորները,—չնորհիվ որդանիզմի կատարյալ քայքայ-  
 ման, վորն առաջանում է Ֆորդի մոտ աշխատելուց: Ֆորդի  
 կոնվեյերային ժապավենը շարժվում է այնպիսի արագությամբ,  
 վոր ամեն մի բանվոր չի կարող գլուխ հանել կոնվեյերի աշ-  
 խատանքը: Բայց քանի վոր գործազուրկները անթիվ են,  
 Ֆորդը չի նեղվում: Նա ժապավենը թողնում  
 է բանվորի համար հնարավոր ամենամեծ արագությամբ:  
 Ով չի հասցնում, նրան դուրս են շարտում և փոխարինում  
 ուրիշով: Այսպիսով Ֆորդի կոնվեյերում տեղի յե ունենում  
 մարդկային որդանիզմի համար առավել հնարավորություննե-  
 րի հավասարեցում: Սոցիալիստական արտադրության մեջ  
 կոնվեյերի հիմնական սկզբունքն է կոլեկտիվ հնարավորու-  
 թյունները: Իհարկե մենք չենք հավասարվում ամենավատ աշ-  
 խատողին: Մենք չենք հավասարվում նաև միջակ աշխատողին,  
 քանի վոր «միջակն» ավելի մոտ է ամենավատին, քան իսկա-  
 կան միջինին: Կոլեկտիվու: հարվածային հավասարվելը նշա-  
 նակում է հավասարվել իր ֆիզիքական հնարավորություննե-  
 րով իսկապես միջակ, բայց իր դիտակցությամբ առաջավոր  
 բանվորին: Սոցիալիստական ձեռնարկության մեջ հարվածային  
 կոլեկտիվը վորոշում է կոնվեյերի շարժման արագությունը:  
 Կապիտալիստական և սոցիալիստական կոնվեյերների միջև  
 տարբերությունը դուրս է գալիս վոչ միայն քանակական,  
 այլև վորակային. այնտեղ հավասարվում են առանձին բան-  
 վորին, վորն աշխատում է մինչև իր ֆիզիկական ուժերի



վերջին սահմանները, իսկ այստեղ—հավասարվում են կոլեկտիվին, վորը գիտակցականորեն կանոնավորում է թե իր ամբողջ և թե իր յուրաքանչյուր անդամի աշխատանքը։

Ինչո՞վ է պահվում Ֆորդի կոնվեյերի դիսցիպլինան։ Նա պահվում է քաղցով, ստիպողականութամբ, գործադրվողութան հանդեպ յեղած յերկյուղով։ Ստիպողական դիսցիպլինան սաստկացնում է աշխատանքի ծանրութունը և ընդգծում նրա ավտոմատիզմը։ Ամերիկական կամ գերմանական «աւցիտ-նալացված» ձեռնարկութան բանվորը—մեքենայի մի մասն է, եկացենտորիկի կամ ատամնավոր անիվի պես մի բան։ Բանվորի աշխատանքն ավտոմատ կերպով է կատարվում և վորքան նա քիչ ժամանակ ծախսե մտածելու վրա, այնքան էլ ձեռնտու յե կապիտալիստի համար։ Իսկ սոցիալիստական ձեռնարկութան կոնվեյերը։ Արդյոք նա բանվորից պահանջում է նույնպիսի ավտոմատիզմ։ Բոլորովին ընդհակառակը։ Մեր ձեռնարկութուններում կոնվեյեր և անընդհատ հոսանք մտցնելն ամեն տեղ և ամեն ժամանակ կապված է արտադրութան կազմակերպման մեջ կատարվող այնպիսի փոփոխութունների հետ, վորոնք վկայում են գիտակցական դիսցիպլինայի աճման մասին։ Վորպես որինակ, կարելի յե վերցնել մի վորևե արտադրական կոլեկտիվ, վորն այժմ կազմակերպված է և կազմակերպվում է շատ ու շատ ձեռնարկութուններում։ Մոսկվայի, Յենտրոսոյուզի հրուշակային Փարրիկայի փաթաթող բանվորուհիները կոլեկտիվն առաջացել է հետևյալ կերպ.—սկզբում յուրաքանչյուր փաթաթող բանվորուհի տշխատում էր առանձին, նա ինքն էր ապրանքը բերում դեպի իր սեղանը և այստեղից—կշեքը։ Հենց իրենց, բանվորուհիների նախաձեռնութամբ, փաթաթման պրոցեսը բաժանվեց առանձին գործողութուններով։ Սեղանի վրայի առանձին վանդակների փոխարենն առաջ յեկավ կոնվեյերը։ Աշխատանքի դիսցիպլինան բարձրացավ և այժմ մտցվում է փաթաթման համար վոչ թե ձեռքի, այլ մեքենայացված կոնվեյեր։ Հենց նույն ձևով էլ կազմվեց կայսրիններ պատրաստող հարվածային կոլեկտիվ Չլատոտուտի մեխանիկական գործարանում։ Սկզբում յուրաքանչյուր վարպետ պատրաստում էր ամբողջ կացինը, այնուհետև բանվորներն իրենք բաժանեցին այդ պրոցեսը և կազմեցին կոլեկտիվ, վորտեղ ճբոլորը մեկի համար է, մեկը բոլորի։ Այն կոլեկտիվներում, վորտեղ արտադրութան պրոցեսը բա-

ժանված է առանձին, հասարակ ուղերացիաների, բանվորները հաճախ իրենց վրա պարտավորութուն են վերցնում՝ մասնակցողներին փոխադրել քիչ վորակյալ աշխատանքից դեպի ավելի վորակյալ։ Բանվորներն իրենք են կազմակերպում փոխադարձ վերահսկողութունը և փոխողութունը (Ռիկովի անվան հասարակութի կոմունանաչ Լակիտնի մասնաձեռքործարան և այլն)։ Այստեղ մենք արդեն տեսնում ենք մի բոլորովին նոր դիսցիպլինայի յերևան գալը—սոցիալիստական դիսցիպլինայի և սոցիալիստական մրցութան։ Իսկ այս բոլորովին փոխում է կոնվեյերի աշխատանքը։ Արդեն վոչ թե բանվորն է դարձած ավտոմատի մի մասը, մեքենայի հավելվածը, այլ մեքենան է հանդիսանում բանվորի ոգնականը, բանվորի, վորն իր աշխատանքը կազմակերպում է նոր հիմունքներով։

Սոցիալիստական արգյունաբերութան մեջ անընդհատ հոսանքն ու կոնվեյերը բանվորից պահանջում են բոլորովին նոր հատկութուններ, հասեմատած նախկին պրոֆեսսիոնալ վարժութունների հետ։ Պրոֆեսսիոնալ վարժութունը—դա ֆիզիքական ճարպիկութուն է, վորը գործադրվում է մերենայի վրա և հենց այն մեքենայի վրա, վորի վրա սովորել է սովյալ բանվորը։ Իս բանվորի հարմարվելն է դադարան։ Կոնվեյերում հարկավոր է շատ քիչ սովորել այդպիսի ֆիզիքական հարմարեցման։ Սակայն կոնվեյերը բանվորից պահանջում է ուժեղացնել զուտ հասարակական հատկութունները—կոլեկտիվում աշխատելու կարողութուն, ընկերականութան զգացմունք, փոխադարձ վստահութուն, հավասարաչափ աշխատելու կարողութուն և այլն։ Մեքենայի յենթարկումը մարդուն, վոր արտահայտված է սոցիալիստորեն կազմակերպված, հոսանքային արտադրութան մեջ, բարձրացնում է աշխատավորի մտավոր մակարդակը, դաստիարակելով նրան նոր, հասարակական հատկութուններով։ Վորքան հեռու յե կոնվեյերային արտադրութան արտասահմանյան տեխնիկան այդ մակարդակից։ Յեվ յեթե սոցիալիստական ձեռնարկութան բանվորը շարունակ ձգտում է կատարելագործել կոնվեյերը, ապա այդ տեղի յե ունենում վոչ միայն այն պատճառով, վոր նա զխտե, թե կատարելագործումը հենց իր ոգտին է, այլ և այն պատճառով, վոր աշխատանքի նոր կազմակերպումն ավտապիզել է գիտակցական դիսցիպլինան, ավելի ևս ուժեղացրել է ընկերակա-

նությունը և փոխադարձ ոգնության զգացմունքը: Աշխատանքի գիտակցական ղեկավարինայի և նրա սոցիալիստական կազմակերպման հողի վրա կոնվեյերը բանվորի մեջ ստեղծում է մի ցանկություն—կատարելագործել իր աշխատանքը: Կոնվեյերը մղում է դեպի կատարելագործում, նա բանվորին հնարավորություն է տալիս տեսնել իր մտավոր աշխատանքի պտուղները, իր գյուտարարության, ստեղծագործության պտուղները, վորը գործադրվում է իրականում:

### ՄԻ ԳՈՐԾԻ ՅԵՐԿՈՒ ԿՈՂՄԸ

Արտադրության ավտոմատիզացիան պարզացնում է աշխատանքը, բաժանելով նրան վոչ բարդ գործողություններին և հենց դրանով տեխնիկական հնարավորություն է բաց անում մարդուն մեքենայով փոխարինելու համար: Յեվ, թեև ավտոմատիզացիան աշխատանքը դարձնում է ավելի քիչ բազմազան, բայց մեր պայմաններում դա չի նշանակում, վոր բանվորն ամբացված է մի միապաղաղ, ձանձրալի գործողության, ինչպես կապիտալիստական կոնվեյերում: Ընդհակառակը, բանվորը մղվում է դեպի կատարելագործություններն ու գյուտարարությունը: Յեվ նա ունի բոլոր հնարավորությունները՝ իր ստեղծագործական ձգտումներն իրականացնելու համար:

Սակայն արտադրության ավտոմատիզացիան բոլորովին չի նշանակում, վոր բոլոր բանվորներն արդեն մոտակատարիների ընթացքում կդառնան միայն մասնակի գործողությունների վրա աշխատողներ: Ընդհակառակը, յերբեք և վոչ մի տեղ, մի ամբողջ յերկրի և վոչ մի զարգացող անտեսության մեջ չի պահանջվել բարձր ուսուցման տեղ բանվորների այնպիսի վիթխարի թիվ, ինչպես մեր յերկրի աճող սոցիալիստական տնտեսության մեջ: Աժուխի հանման ավտոմատիզացիայի (լեռնային կոմբայն) հեռանկարը մեզ մտ բացվել է միայն այն բանից հետո, յերբ հանքահորում մեխանիզացիան մտցվեց: Հացի բերքահավաքման ավտոմատիզացիայի (կոմբայն) խնդիրը մենք սկսեցինք լուծել միայն տրակտորի հիմունքով: Իսկ մեքենայացում մտցնելը տնտեսության այնպիսի ճյուղերում, վորոնք տարիների ընթացքում պահվել են ձեռքի ծանր աշ-

խատանքով— կպահանջի հարյուր հազարավոր վորակյալ բանվորներ:

Բացի դրանից, կոնվեյերներում արտադրության մասսայական յեղանակների մուծումը պահանջում է ստեղծել բարձր վորակի բանվորներին, հրահանգիչներին և կարգավորիչներին կադրեր, վորոնք հսկում և կանոնավորում են կոնվեյերի ընթացքն և ավտոմատ դադարակի աշխատանքը: Վերջապես, նոր մեխանիզմների մուծումն և արտադրության պրոցեսում մշտական կատարելագործությունները պահանջում են ուժեղացնել գործարանի գործիքների բաժինները ու լաբորատորիաները: Տասնյակ ու հարյուր հազարավոր մարդիկ պետք է տիրապետեն նեղ մասնագիտության տեխնիկային: Յեվ յեթե տեխնիկայի սոցիալիստական գործադրությունը պահանջում է բանվորից մասնակի ուղեբացիայում ունենալ լավ, բազմակողմանի զարգացում, ապա, մյուս կողմից, կարգավորողից, հրահանգչից, մասնագետից, ղեկավարից նա, տեխնիկան, պահանջում է ամենախորը կերպով թփանցել իր մասնագիտության ելության մեջ, այդ բազմակողմանի պոլիտեխնիկական զարգացման բազայի վրա:


### ԱՇԽԱՏԱՆԻ ՅԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՀԱՐՍԱՆՑՈՒՄԸ

«Վերակառուցման շրջանում տեխնիկան վճռում է ամեն ինչ» (Ստալին): Մենք մեր առաջ խնդիր ենք դրել տեխնիկան յենթարկել աշխատանքի սոցիալիստական մեթոդներին:

Իրա համար մենք սինչև վերջը կատարում ենք աշխատանքի բաժանումը հասարակ ուղեբացիաների (ֆունկցիոնալ սիստեմը տեքստիլ արդյունարերության մեջ), պարզացնում ենք արտադրության պրոցեսները և հենց դրանով հեշտացնում ենք արտադրության յուրաքանչյուր ցավոտ տեղը լավ տեսնելու հնարավորությունը:

Մենք տեխնիկան յենթարկում ենք մեզ նրանով, վոր վոչ միայն մտցնում ենք հոսանքային սիստեմն ու կոնվեյերը՝ ձեռքի աշխատանքի գործադրության համար, այլ և ձգտում ենք ձեռքի աշխատանքը փոխարինել մեքենայով—ավտոմատով:

Կոնվեյերային արտադրության վերջ մենք պարզացնում ենք



թեթևացնում ենք յուրաքանչյուր բանվորի աշխատանքային աշխատանքի, բայց միևնույն ժամանակ բոլոր բանվորներին զրոգում ենք հասկանալ և յուրացնել ամբողջ արտադրութեան ընթացքը:

Մենք տեխնիկան յենթարկում ենք մեզ, կոնվեյերի հասարակ, վոչ բարդ աշխատանքը ներդաշնակելով աշխատանքի բարձր, գիտակցական դիսցիպլինայի հետ, այդ աշխատանքի մեջ մտցնելով ընկերական համերաշխութուն, փոխադարձ ուժանդակութուն, ստեղծագործական ուղղութիւն:

Մենք պահանջում ենք բանվորից, վորպեսզի նա վոչ միայն աշխատի կոնվեյերի վրա, այլ և գյուտարարութուն անի և հենց զբանով թեթևացնի իր աշխատանքն և արագացնի և բտադրութեան պրոցեսը:

Այս բոլորը միասին վերցրած՝ կազմում են աշխատանքի սոցիալիստական կազմակերպման անհրաժեշտ տարրերը և մենք տեսնում ենք, վոր աշխատանքի սոցիալիստական մեթոդները թափանցում են մեր յերկրի վողջ սոցիալիստական շինարարութեան մեջ: Մի քանի որինակներ, վորոնք բերված են նախորդ վիժում, համոզիչ կերպով գուցե են տալիս տեխնիկայի ոգտագործման սոցիալիստական մեթոդների ուժով:

Այժմ ժամանակ է, վոր մենք մեզ հարց տանք—իսկ մեր պլաններում կնչն է, վոր աշխատանքը դարձնում է ավելի արդյունավետ: «Կրասնի տրեուզոլնիկ»-ի կոնվեյերի կամ «Էլեկտրոսիա» գործարանի բանվորը վճարեցից է իր մեջ ույժ գտնում, վորպեսզի հաղթանարե կոնվեյերային արտադրութեան միապաղաղութունը, գյուտեր անի, արագացնի նյութերի մըշակման պրոցեսը, կատարի և գերակատարի պլանը:

Կապիտալիստական պայմաններում «նույնիսկ աշխատանքի թեթևացումը դառնում է տանջանքի աղբյուր, վորովետև մեքենան վոչ թե բանվորին է աղատում աշխատանքից, այլ աշխատանքը—ամեն մի բովանդակութունից»: Մարքսի այս աշխատանքը—ամեն մի բովանդակութունից: Մարքսի այս աշխատանքը մեզ բանալի յեն տալիս՝ հասկանալու այն, թի ինչու սոցիալիստական արտադրութեան աշխատանքը հանդիսանում է վոչ թե տանջանք, վոչ թե ծանր լուծ, այլ պատվի, փառքի գործ: Այդ տեղի յե ունենում այն պատճառով, վոր աշխատանքի սոցիալիստական կազմակերպումը հարստացնում է նրա բովանդակութունը և պակասեցնում է աշխատողի ֆիզիքական ու ջղային լարվածութունը: Աշխատանքը, վորը մի վո-

րոշ նպատակ է հետապնդում, վորն աշխատավորների կողմից գիտակցորեն դրված է նրանց առաջ, արդեն հենց միայն այս հանդամանքի շնորհիվ դառնում է բովանդակութեամբ ավելի հարուստ:

Արտադրութեան ամբողջ պրոցեսը հասկանալու ձգտումը, իր վորակը բարձրացնելու, լավագույն վորակի ավելի շատ արտադրանք տալու, գյուտեր անելու ձգտումը, իր սեփական և իր ընկերների աշխատանքը թեթևացնելու համար մեքենայական տեխնիկան գործադրելու ձգտումը—այս բոլորը տարբեր արտահայտութուններն են այն փաստի, վոր ԽՍՀՄ-ում բանվորի համար աշխատանքն իր բովանդակութեամբ դարձել է ավելի հարուստ: Ավելի ճիշտ՝ այդ աշխատանքն առաջին անգամ ստացել է իր բովանդակութունը, քանի վոր կապիտալիզմի ժամանակ նա անբովանդակ էր, դատարկ, անիմաստ: Մեր յերկրի բանվորը գիտե, թե ում հաւար և ինչու համար է աշխատում: Նա ամեն որ այս բանը ստուգում է իր սեփական փորձով և այս գիտակցութունը նրա աչքում անչափելիորեն բարձրացնում է աշխատանքի նշանակութունը և թեթևացնում է այն ամենասարսափելի դժվարութուններն ու զրկանքները, վորոնք պատահում են մեր զարգացման ճանապարհին: Հանդիպական արդֆինսպլանը, վորի ույժը ստիպված էր խոստովանել նույնիսկ ֆաստարար Ռամդինը,—դա մեկն է գիտակցական նպատակաձգման արտահայտութուններից, վորը զեկավարում է մեր յերկրի պրոլետարին և նրա աշխատանքը հարստանում է իսկապես վոր բարձր բովանդակութեամբ: Հանդիպական արդֆինսպլանն արտահայտում է շարքային պրոլետարների ձգտումը—ամենաշուտափուլյժ կերպով իրականացնել այն առաջադրութունները, վորոնք նրանց առաջ դրել է կուսակցութունը: 120 որ,—ստուգ են ամերիկական ինժեներները, կազմելով Մագնիտագորսկու պատանշի պըլանը: 90—պատասխանում է վարչութունը: 75—պահանջում են բանվորները: 71—կատարում է պրոլետարների կոլեկտիվը: վորոնք համակված են սոցիալիստական մրցութեան ենտուղիակով:

Ինչ է սա, ոեկորդների յետեից ընկնել է, կոնկրետեցիա: Իհարկի վոչ: Արդյունաբերական ձեռնարկութունների աշխատողների համամիութենական կոնֆերենցիայում պատմելից մի այսպիսի փաստ.—Պետրովսկու անվան գործարանի

(Դնեպարոպետրովսկ) պրոկատի բաժնի լավագույն բրիգադները—  
 դրանք գերմանական վարպետ Բարոնի և բանվոր—կոմունիստ  
 Մարտինենկոյի բրիգադներն են: Յերկու բրիգադներն ել աշ-  
 խատելով մեկ մեքենայի վրա, բայց զանազան հերթերով,  
 մրցում են իրար հետ: Բրիգադների հանդիպական պլանն է—  
 որական 72 տոնն: Բարոնը տալիս է 76, Մարտինենկոն—78:  
 Յերկար և անհաջող ձիգերից հետո, հունվարի 11-ին Բարոնը  
 մի անգամից տալիս է 100 տոնն: Մրցության տախտակի վրա  
 նա խնդրեց գրել հետևյալը.—«Տվի 100 տոնն: Մարտինենկո-  
 յի առաջ բարյեր է դրված: Չես ցատկի նրանից»: Յեկամ  
 Մարտինենկոյի բրիգադան: Կարգաց: Թևերը քշտեց: Յեվ հեր-  
 թափոխությունից առաջ Մարտինենկոն տախտակի վրա գրեց-  
 «Բարյերը վերցրինք: Տվինք 103: Տանք ավելի»:

«Տանք ավելի»—սրանով արտահայտվում է մրցության  
 ամբողջ ելուցյունը: Վոչ թե ուկորդ, վորի վրայով քո ընկե-  
 րը չի կարող ցատկել, այլ մի ճանապարհ, վորտեղ դու պա-  
 հանջում ես ընկերովից, վորպեսզի նա հասնի քեզ և անցնի:  
 «Կոնկուրենցիան ասում է, վերջին հարվածը տուր յետամնաց-  
 ներին, վորպեսզի հաստատես քո տիրապետությունը: Սոցիա-  
 լիստական մրցումն ասում է.—վրմանք աշխատում են վատ  
 մյուսները լավ, վրմանք ել ավելի լավ, հասիր լավագույններին  
 և հաջողեցրու ընդհանուր վերելքը» (Ստալին):

Աշխատանքի աշղպիսի կազմակերպումն աշխատավորին տալիս  
 է բոլորովին նոր, կապիտալիզմի որոք անյերևակալելի հնարա-  
 վորություններ՝ արտադրության միջոցները նվաճելու համար:  
 Կապիտալիստական ձեռնարկության մեջ բանվորը մեքենայի  
 ստրուկն է և այդ ստրկությունից նա կարող է ազատվել մի-  
 այն սովամահության գնով: Սոցիալիստական ձեռնարկության  
 մեջ բանվորը մեքենայի տերն է և այդ մեքենային ստիպում  
 է աշխատել ավելի շատ և ավելի լավ, քան թե նա աշխատել  
 է առաջ: Այդպիսի մի որինակ արդեն բերվել է այստեղ—ադ-  
 յուսի գործարանների արտադրողականության մասին: Ավելի  
 ևս պայծառ որինակ կարող է ծառայել Կամենսկում, Չերժին-  
 սկու անվան գործարանի կոմյերիտականների առաջարկու-  
 թյունը՝ կոկան առանց ջրի հանգցնելու մասին: Մինչև այժմ  
 կոկաը հանգցնում էյին ջրով և հսկայական քանակությունից  
 կազմվում էր գոլորչի, վորը կորչում էր ողում: Կոկաի անջուր  
 հանգցնելը, վոր գործադրվում է արտասահմանում, այնուամեն-

նայնիվ չտարածվեց այնտեղ, չնայելով իր ակներև առավե-  
 յություններին: Կոկա արդյունաբերող կապիտալիստի համար  
 ձեռնառու չե ծախել առանց ջրի հանգցրած, թեթև կոկաը (նրա  
 մեջ բացակայում է խոնավությունը, վորը կոկաի կշիռն ավե-  
 ռացնում է 5—6 տոկոսով): Խորհրդային ինժեներները բազմիցս  
 դիտել են արտասահմանում, թե ինչպես կոկաը մետաղագործա-  
 կան գործարանն ուղարկելիս թրջում էյին, վորպեսզի ավելա-  
 ցնեն նրա կշիռը: Չերժինսկու անվան գործարանի կոմյերի-  
 տականներն ընկեր Որջոնիկիձեյին դիմեցին մի նամակով, վո-  
 րով առաջարկու էն ՍՍՀՄում ամենուրեք մտցնել կոկաի հանգ-  
 ցընելն առանց ջրի:

Յեվ ահա մի այնպիսի խոշոր տեխնիկական նվաճում, ինչպես  
 կոկաի հանգցնելն է առանց ջրի, անընդունելի յե դառնում կա-  
 պիտալիստական պայմաններում: Իսկ ինչքան նշանավոր է  
 այն փաստը, վոր ընկեր Յակովլեվը բերեց Համկոմկուսի (բ)  
 16-րդ համագումարում, այն մասին, վոր կապիտալիստական  
 Ամերիկան տրակտորն ոգտագործում է միայն նրա հնարավոր  
 արտադրողականության 1/4-ի չափով: Ամերիկացիք իրենց ա-  
 ռաջ խնդիր են դրել միայն առ 1940 թվականը հաջողեցնել  
 էլեկտրոկայանների տարեկան միջին ոգտագործման 4000 ժա-  
 մը, իսկ մեզանում այժմ նույնիսկ վոչ արդյունաբերական  
 ուայոններում ոգտագործման ժամերի քանակը հասնում է  
 4,200-ի: Վոր ուղղությամբ էլ վոր մենք համեմատենք աշխա-  
 տանքի սոցիալիստական կազմակերպումը կապիտալիստական  
 կազմակերպման հետ (այսօրն աշխատանքի կապիտալիստա-  
 կան բաժանման հետ)—ամենուրեք մենք կտեսնենք սոցիալիս-  
 տական սիստեմի առավելությունը: Յեթե վերցնում ենք տեխ-  
 նիկայի ոգտագործումը,—մենք հնարավորություն ուենենք ա-  
 վելի լրիվ չափով ոգտագործելու տեխնիկան, քան կապիտալիստ-  
 ները: Յեթե վերցնում ենք կենդանի բանվորական ուժի կազ-  
 մակերպումը,—մեզանում տեղ չունի մարդկային եներգիայի  
 այն խելագար վատնումը, վորն որգանապես յուրահատուկ է  
 կապիտալիզմին (վրմանք համար—գործադրություն, վրմանք  
 համար չափից դուրս աշխատանք): Կապիտալիստական հաս-  
 րակության մեջ մթերքներն և արտադրության միջոցներն  
 վատնումին մենք հակադրում ենք արտադրության պլանային  
 կառավարումը և հենց միայն այս բանը մեզ տալիս է հսկայա-  
 կան առավելություն, թույլ տալով մեզ արտադրական ուժերն

ավելացնել չտեսնված և կապիտալիզմի համար անհնարին տեղափերով: Սոցիալիստական սիստեմը հարստացնում է աշխատանքը, հարստացնում է տեխնիկան: Ընկեր Ստալինի առաջադրած լոզունգը՝ տեխնիկային տիրապետելու խնդիրը նշանակում է վերակառուցում՝ աշխատանքի սոցիալիստական մեթոդներէ հիմունքով:

Տիրապետելով տեխնիկային, մենք միաժամանակ հենց նրա յուրացման պրոցեսում հաղթահարում ենք տեխնիկային, վերարտադրում բարձրագույն ձևերի, հեղափոխականացնում ենք նրան:

**ԻՆՉՈՒՆ ԱՎԹԱԳՈՐԾՆԵՐԸ ՀԱՂԹԵՑԻՆ**

Բազմի և Գրողնու նավթագործները ցույց տվին տեխնիկայի համար այն խի պայքարի որինակ, վորը նշանակում է վոչ միայն փոխ առնել արտասահմանյան փորձը, այլ և հարստացնել այն: Հնգամյակի սկզբից Բազմի նավթի հանումն աճել է յերկու անգամ: 1920 թվականին շահագործվել է 1294 նավթանցք, 1930 թվականին—4,262:

Մենք չենք կանգ առնի այնպիսի տեխնիկական կատարելագործությունների վրա, ինչպիսին է զուլի փոխարինումը նավթամղիչով: Դուլի մասին արդեն ուղղակի սոռացել են: Վերցնենք հորափորումը: 1920 թվականին ելեկտրական հորափորումն Ազնեվթում գործադրվում եր նավթանցքերի 59,1 տոկոսի վրա, 1930 թվականին—99,7 տոկոսով, Իսկ այժմ խորհրդային նավթարդյունաբերությունն անցնում է սուրբինային հորափորման, գործադրելով խորհրդային ինժեներ կապելյուշնիկովի գյուտը, մի գյուտ, վորը համաշխարհային նվաճում է նավթային գործի տեխնիկայում: Արդյոք Բազմի նախահեղափոխական 220 տերերը կարող էին գործադրել այն հսկայական կառուցումները, վորոնք կապված են նման տեխնիկական նորամուծումների ոգտադրման հետ: Մինչև հզափոխական ժամանակներում նավթահանքերը գերատիչ կերպով փոխական էյին արված առանձին տերերի միջև, բայց բաժան-բաժան էյին արված առանձին տերերի միջև, բայց յեթե նույնիսկ Արևմուտքի և Ամերիկայի կապիտալիստական յերկրներում նավթային հանքերը գտնվում են մի մոնոպոլիստ

—տրեստի ձեռքում, ապա դա ևս չի նշանակում, վոր յերկրի խորքերի գիշատիչ կողպուտը թեկուզ ամենաչնչին չափով չգործանում է: Ընդհակառակը, կապիտալիստ-մոնոպոլիստը հարձակվում է նավթատար շերտերի վրա, վորպեսզի պոկի հարուստ ավարը,նա այդ շերտերը շահագործում է զուտ թալան-չիական ձևով, այնպես վոր, հարևան շերտերը, վորոնք կարող էյին նավթի հանուրդ տալ, շահագործման համար սակավ պետքական են դառնում: Այսպիսով մոնոպոլիստական կապիտալիզմի տեխնիկան, ծառայելով իբրև կապիտալիստի հարստացման միջոց, կտրում է այն ճյուղը, վորի վրա ինքն է նստած: Նավթի արդյունաբերության մեջ տեխնիկայի սոցիալիստական ոգտադրումը նշանակում է բնական հարստությունների ամենալիակատար ոգտադրում: Դրանով է բացասվում հետախուզական հորափորման լայն ծավալումը (իզուր չե, վոր ֆինասարարներն այնքան ձգտում էյին կազմալուծել հետախուզությունը): 1930 թ. կատարվել է (Ազնեվթում) 132 մետր հետախուզություն—2 անգամ ավելի, քան 5-յակի առաջին տարում: Սակայն 1931 թ. հետախուզությունն ուժեղացվում է ավելի մեծ չափով: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում թեթև նավթի հետախուզման վրա, վորը հարկ է լինում վորոնք նոր ուայոներում և հին նավթատարածությունների խոր շերտերում: Դրա համար արդեն սկսված է հորափորումը Լինինյան ուայոնում և պետք է նավթանցքը փորվի 2500 մետր խորությամբ: Սուբախանում ընարված է 3 հորափորման կետ, վորտեղ հարվածային կարգով փորվում են 1,700 մետր խորությամբ նավթահորեր:

Այս հորափորումները պետք է բաց անեն նավթային նոր հորիզոններ և ապահովեն նավթահանման անհրաժեշտ ավելացումը հին նավթավայրերում:

Վոչ պակաս տեխնիկական նշանակություն ունի նաև հորափորման արագացումը: Ըստ պլանի, նավթահանքերը պետք է միայն հնգամյակի վերջին տարում վերցնեյին հորափորման 300 մետր արագություն: Մի քանի հարվածային նավթահանքեր արդեն 1930 թվականի հատուկ յեռամայակում հասան հորափորման ամերիկական տեմպերին: Նրանք վերցնում էյին 160, 180, 200-ական մետր մեկ դազդյա-ամսում, իսկ յերբեմն: մինչև 300 մետր (№ 73 հորափորվածք): Իլյիչի նավթախորշում, № 672 հորափորվածքում, 43 որում փորված է 689 մետր

Գուրն (ДОЛОГО) աշխատանքի մեջ և վոչ թե 2—3 ժամ, ինչպես առաջ էր, այլ 5—6 ժամ: Այսպիսով արդեն նորագույն տեխնիկայի հենց միայն սոսկ գործադրումը պլանային արտադրութեան մեջ, — վորը բաժան-բաժան չի արված 200 տերերի միջև, — և նավթահանման գիշատիչ ձևերից հրաժարվելը թույլ տվին մեքենան ոգրագործել ամենամեծ հաջողութեամբ:

Սակայն բանը միայն պլանային կերպով անտեսութեան վարելու, յերկրի հարստութեանները ճիշտ շահագործելու մեջ չի կայանում: Գործը կայանում է մարդկանց առանձնահատուկ կադմակերպութեան մեջ, նոր սոցիալիստական արտադրական հարաբերութեանների մեջ: Բանվորը հասկանում է արտադրութեան շահերը, նա գիտի նրա ամբողջ պրոդեսները, նա գիտի մեքենայացման գաղտնիքը և ձգտում է արտադրութեանը կատարելագործել այնպես, վորպեսզի ոգրագործվի նրա յուրաքանչյուր պտուտակը: Ահա ավյալներ, թե ինչպես Սուրախանի յերկրորդ նավթահանքի (վորը լավագույններից մեկն է Ադրբեյջանում) բանվորները մասնակցել են ձեռնարկութեան արտադրական կյանքին: Նավթահանքում արտադրական խորհրդակցութեանները վերակառուցվում են, յուրաքանչյուր ցեխ, յուրաքանչյուր մաս ունի իր արտադրական խորհրդակցութեանը: Իսկ ամբողջ ձեռնարկութեան ընդհանուր հարցերը լուծվում են անբողջ նավթահանքի ամիսը 1 անգամ գումարվող կոնֆերենցիայում: Դեկտեմբերին արտադրական խորհրդակցութեանների աշխատանքին մասնակցել է 177 մարդ, 1931 թվ. փետրվարին—278:

1930 թվականի հատուկ յեռամսյակում բանվորներից ըտացված է 133 առաջարկութեան, 1931 թվ. առաջին յեռամսյակում—97 առաջարկութեան և գյուտարարութեան: Միմիայն 49 առաջարկների ռեալիզացիան նավթահանքին տվել է 119,600 ռուբլու խնայողութեան:

Հատուկ յեռամսյակում (1931 թ.) հարվածայինները գորահավաքել են ներքին ռեսուրսներ 90,270 ռուբլու, 1931 թ. նունվարին—26000 ռուբլու, փետրվարին—39,371 ռուբլու: 1931 թվականի յերկու ամսվա ընթացքում ներքին ռեսուրսների գորահավաքման վերաբերյալ առաջադրութեանը գերակատարված է 21,371 ռուբլով: Հենց իրենց, հարվածայինների նախաձեռնութեամբ, հանքային կոմիտեյին կից ստեղծված են՝ աս-

յիննալացման խորհուրդ և գյուտարարութեանների իրացման բրիգադա:

Թե ինչպիսին էր ռեսուրսների այդ մորիլիզացիան և ինչպես էր նա տեղի ունեցել,—այդ մասին յերկրորդ նավթահանքի հարվածային կոմիտեիականների խորհրդակցութեանը պատմեց հին կահավորանքի հավաքման ու վերանորոգման բրիգադի ժուկովը.—

«Մեզ մոտ պակասում էր սարքավորանքը: Բշիջում հարց էր դրված ներքին միջոցների գորահավաքման մասին: Մենք մի անգամից վորոշեցինք այդ գործի համար ջոկել հատուկ մարդկանց, այնպես, վորպեսզի նրանք վրա պատասխանատվութեանը դրվի հին կահավորանքի հավաքման համար: Մեր անտեսավարներն ընգառաջ գնացին և մենք ձևակերպեցինք մեր բրիգադն իրեն ինքնուրույն միավոր: Մենք հավաքեցինք բոլոր հին խողովակներն ու փակիչները այն տեղերից, վորտեղ նրանք հարկավոր չէին, վերանորոգեցինք և հայտերի (զայավկա) համաձայն հանձնեցինք հորափորման տեղերին:

Մենք կատարում ենք ամբողջ հավաքված սարքավորանքի, նրա վերանորոգման և հանձնման հաշվառքի: Մենք մրցութեան պայմանագիր ենք կնքել 1-ին և 2-րդ մասերի հետ և այդ պայմանագրով պարտավորվել ենք հին սարքավորանք գտնելու համար ճանապարհների վերայով յերթերի թիջն ավելացնելու 10-ից մինչև 15:

Այսպիսի աշխատանքի հետևանքով 6 հողուց բաղկացած մեր բրիգադը կատարեց հին սարքավորանքը հավաքման ու վերանորոգման առաջադրութեանը—45 հազար 600 ռուբլու փոխարեն 65,670 ռուբլու:»:

Բանվորների ստեղծագործական նախաձեռնութեանն ուղղված է այն բանին, վորպեսզի արտադրութեան յուրաքանչյուր մասնիկն ամենամեծ չափով ծառայեցնել հնգամյակի շահերին: Մի ուրիշ հարվածային—ընկեր Սմիրնովի պատմութեանը ցույց է տալիս, թե վորտեղ և ինչ ձևերով է արտահայտվել այդ նախաձեռնութեանը:

«Առաջ այնպես էր լինում, վոր փորված հանքը պատրաստ է շահագործման համար, իսկ գործիքները դեռ հավաքված չի: Այդ ժամանակ բանվորները գնում են

պահեստ՝ բոլոր և ուրիշ մասեր բերելու: Սկսում են դրանք հավաքել հանքահորում: Հետևանքն այն է լինում, վոր փոխանակ 24 ժամից հետո շահագործման անցնելու, հանքահորն սկսում էր աշխատել միայն 3 որից հետո:

Յեռ առաջարկեցի գործիքները հավաքել գետնի վրա, հետո արդեն նավթանցքի վրա: Իմեցինք տնտեսավարներին: Սրանք անվստահությամբ վերաբերվեցին այս իդեային, բայց և այնպես, մեզ հնարավորութուն տվին գործիքները հավաքել գետնի վրա:

Սկզբում յեղանակը խանդարում էր մեզ: Յեխ էր: Առաջուց մենք գործիքները հավաքում էինք գետնի վրա յերկու որվա ընթացքում, այսինքն հանքահորի շահագործումը կարողացանք արագացնել միայն մեկ որով: Բայց հետո մենք փորձ ձեռք բերինք և գործիքները սկսեցինք հավաքել 8 ժամվա ընթացքում, այժմ անցանք 6 ժամվա: Այսպիսով նոր հանքահորը, փորելը վերջանալուց հետո, շահագործման է անցնում 16 ժամում:

Բանվորի միտքն ուղղված է վոչ միայն դեպի մեխանիզմի աշխատանքի արագացումը (որինակ, դեպի դուրի (ДОЛО О) աշխատանքի արագացումը), այլ և դեպի այն, վորպեսզի կրճատվի, պակասեցվի մի մեխանիզմի (դուրի) և մյուսի (նավթամղիչի) գործադրության մեջ յեղած ժամանակը: Այս միտքը միանգամայն գործադրելի յե նաև արտադրության ուրիշ ճյուղերում: Ըստ ելուցյան, ամեն տեղ ուսցիտնալիցացիայի հիմնականը կայանում է նրանում, վորպեսզի մեխանիզմը շարունակ զբաղված լինի, վորպեսզի նա պարապ չկանգնի ու չսպասի, մինչև վոր հումուլթը նրան հասնի, կամ նրան հասցնեն հումուլթին: Տեխնիկային մասսայականորեն տիրապետելու գաղտնիքը կայանում է նաև նրանում, վորպեսզի յուրաքանչյուր բանվորի սովորեցնել թե ինչպես գտնել կապը մեխանիզմների միջև, ինչպես պարզել այդ կապի կտրվելը և սովորել վերացնել այդ թերությունը:

Հերոսությունը յուրահատուկ է բանվոր դասակարգին, այն էլ վոչ միայն կովի մոմենտին: Այդ հերոսությունը դարձավ «ամենորայ», առորայ յերևույթ՝ բանվորների մեջ, վորոնք կառուցում և ավարտում են սոցիալիստական եկոնոմիկայի հիմքը: «Բակինսկի ութույթ» թերթը պատմում է յերկբորդ նավթահանքի հերոսների մասին.—

«Տասնյակ, յեթե վոչ հարյուրավոր հարվածայիններ կարող են Բագվի ամբողջ պրոլետարիատին հանձնել նավթի համար մղած հերոսական պայքարի վիթխարի փորձը:

Փականադոր Յակով Նիկիտինը դիշերը 5 ժամ աշխատեց հանքահորը փորելիս, ամենաուժեղ հոսանքի տակ: №№ 254, 275 փորվող հանքահորերում բրիգադներն անընդհատ աշխատում էին 24 ժամ, մինչև վոր այդ հանքահորերը գործի դրին:

№ 97 հանքահորում շատրվանը փակելու ժամանակ հարվածայիններ Գրոմանովը, Կոնտեկեր, Սաթ-Ղուլին, Շչեկունովը, Յերմակովը, Շարարովը, Բերժանովը, Զադոկը, Խանմուրազը, Տրոֆիմովը, Ֆերգուլան, Շմելովը, Սաֆար-Ալին, Սադիկինը, Պարամոնովը, Մամոնովը, Յուսուֆ-Ռախմանը, Իգայաթ-Ֆարադին աշխատում էին գալի արլքներում: Նրանք կորցնում էին գիտակցությունը և, նորից գիտակցության գալով, նետում էին հանքահորը: Առանձնապես իրենց ցույց տվին բանվորներ Բերկհեյնը, Սեյֆալին և ինժեներ Կլյավինը:

Տնտեսավարներ Կուզմիցկին, Բայրամովը և ինժեներ Կլյավինն ամբողջ որերով չեյին հեռանում նավթահանքից, յերբ հարկավոր էր փորվող հանքահորերը հարվածային կարգով գործի գցել:

Հանքահորում կան ելի շատ, որինակելի, իսկապես վոր լավագույն հարվածայիններ, բայց վո՞ր պատմես բոլորի մասին, յերբ այժմ նավթահանքի 600 բանվորներից 502-ը հարվածայիններ են, հարվածային յեռամայակի սկզբում յեղած 287-ի դիմաց:

Յեզ ամենուրեք ու ամեն ժամանակ, ամենապատասխանատու ճակատամասերում առաջից ընթացել են կոմունիստները, առաջից ընթացել է բլիշը:

Այո, բլիշի ուղիղ, ճշգրիտ ղեկավարությունը բոլոր շարժիչ փոկերի աշխատանքի վրա, ամբողջ նավթահանքի աշխատանքի վրա, սոցիալցության ու հարվածայնության հսկայական վերելքի հեռ մեկտեղ՝ ողնեց նավթահանքին՝ առաջավոր տեղ բռնելու նավթահանքերի դուրսյան շարքերում, վորոնք իրենց հնգամյակն ավարտեցին յերկու և կես տարուց ավելի շուրջ:

Յեւկ իզուր չէ, վոր նազթագործները հանձն առան իրենց փորձը տալ արդյունաբերութեան յետաձգեալ ճյուղերին, մասնավորապես Դոնբասին: Նավթագործներն իսկապես վոր կարող են շատ բան սովորեցնել Դոնեցի հանքագործներին և ամենից առաջ—սովորեցնել տեխնիկային բոլորիկորեն տիրապետելու գիտութեանը: Իհարկէ նավթագործները դեռևս մինչև վերջ չեն տիրապետել տեխնիկային: Նրանց առջև դեռևս շատ ու շատ աշխատանք կա: Չնայելով հորափորման ապրիլեցիկ հաջողութեաններին, նավթագործները դեռ մինչև վերջ չեն հաղթահարել հորափորման տեխնիկային: Այստեղ հիմնականը հանդիսանում է հորափորողների նախապատրաստութեանը. նրանց ենտուզիագմին և գործին անձնվեր վերաբերվելուն: Պիտի ավելացնել նաև տեխնիկական գրագիտութեանը: Ավելի ևս լուրջ են նավթանցքերի շահագործման խնդիրները: Այստեղ մենք յետ ենք մնացել Ամերիկայից: Մենք շատ նավթ ենք կորցնում, մենք չենք ոգտագործում գաղը: Վերջապես, նավթի վերամշակութեանը մի տեխնիկական խնդիր է, վորի ճիշտ և բազմակողմանի լուծմանը մենք նոր ենք մոտենում: Տնտեսութեան պլանային կանոնավորումը մեզ հնարավորութեան է տալիս այդ խնդիրը լուծել ամբողջովին, վաղորդք «ուրվագծելով» նրա լուծումին և այնուհետև պլանաչափ կերպով կիրառելով նրան կյանքում: Նավթի մաքրումը, այսինքն պատրաստումը՝ գտված նավթամթերքների ստանալու համար (նավթ, բենզին), վորը մինչև այժմ չէր գործադրվում մեղանում, այժմ սկսում է գործադրվել: Հրապարակի վրա՝ յե այն հարցը, թե ի՞նչ նավթամթերքներ և ի՞նչ քանակութեամբ արտադրել: Արդյոք բենզին տալ ամոմբիլներին համար, վորոնք մեղանում ավելի քիչ են, քան Ամերիկայում, թե՛ նավթ տալ տրակտորի համար, վորոնք մեղանում շատ են: Այս բոլոր հարցերը պետք է լուծի նավթի արդյունաբերութեանը: Նրանցից յուրաքանչյուրի լուծումը նավթագործ բանվորներից կ'պահանջե լուրջ ճիշտ և մեծ լարվածութեան, բայց կասկած չկա, վոր նավթագործները կհաղթեն: Դրա գրավականը նրանց առաջին հաղթանակն է—իրենց հնգամյակի կատարումը 2<sup>1</sup>/<sub>2</sub> տարում: Յեթե տեխնիկայի իսկական բոլորիկային նվաճման միայն առաջին քայլերը տվին այդպիսի մի փայլուն արդյունք, ապա ի՞նչպիսի արդյունք կստացվի, յեթե նավթագործները հետագայում ևս զնան նույն ճանապարհով: Այդ գործն իհարկէ հեշտ չէ, բայց միանգամայն հաղթահարելի յե

Դիտութեանը, տեխնիկական փորձը, գիտելիքները—այս բոլորը ձեռք բերվող բաներ են: Այստեղ նրանք չկան, իսկ վազը կլինեն: Այստեղ գլխավորը կայանում է նրանում, վորպեսզի ունենալ տեխնիկային տիրապետելու, արտադրութեան գիտութեանը տիրապետելու բոլորիկային վառ ցանկութեանը: Վառ ցանկութեան դեպքում կարելի յե հաջողեցնել ամեն ինչ, կարելի յե հաղթահարել ամեն բան» (Մատիւնը):

## ԳԼԽԱՎՈՐ ՈՂԱԿԸ

Նավթագործների որինակից ավելի քան լավ յերևում է, վոր տեխնիկան իր իսկական հեղափոխական բնույթը բաց է անում միայն այն ժամանակ, յերբ նա ոգտագործվում է սոցիալիստական աշխատանքի ժամանակ: Դոնբասը մեկից ավելի որինակներ է ցույց տվել աշխատանքային հերոսութեան: Դոնբասն այժմ ունի մեխանիզմների մեծ քանակութեանը: Ակներև է, վոր մեխանիզմներին սոսկ տեղ լինելուց Դոնեցի հանքափորները գնում են և կհասնեն նրանց տիրապետելուն, սպառազինելով իրենց ենտուզիազմը տեխնիկայով, սովորելով սոցիալիստորեն կազմակերպել ամուլի մեքենայացված հանույթը: Դրան կարելի յե հասնել միայն կուսակցական, արհմիութենական, անտեսական ու տեխնիկական որդանների առավել ճշգրիտ, ուղիղ և ճկուն դեկավարութեամբ: Մինչդեռ հենց այս կետում գործի դրութեանը ավելի վատ է, քան յեղել է այդ թեկուզ հատուկ յեռամսյակում: Կազմակերպութեանը չենք գտել գլխավոր ողակը յուրաքանչյուր առանձին հանքահորում, յուրաքանչյուր առանձին ճակատամասում: Յեթե հանքահորերում ուղղակի մեքենայացում կատարվեր, կամ յեթե պահանջվեր ուղղակի հայտնաբերել աշխատանքային հերոսութեանը, այդ կարելի կլիներ անցկացնել Գոլոբովկայում նույն յեղանակներով, ինչ վոր Գորովկայում կամ Լիսիչանսկում, կամ Մոռյանկում: Բայց վորպեսզի մեկը հյուսել մյուսին, ստեղծել տեխնիկայի և մարդկային աշխատանքի կազմակերպման բարձրագույն տիպի միասնականութեանը, դրա համար պահանջվում է կոնկրետ, հետևապես ճկուն մոտեցում գործին, պահանջվում է հաշվի առնել դրութեան յուրաքանչյուր կողմը: Ընկեր Կոսիորն այսպես է բնորոշում դրութեանը (Գորովկայու կուսակառիվում արտասանած ճառից)։



«Այստեղ ամենից առաջ պետք է հարց դնել կուսակազմակերպութեան աշխատանքի մասին: Մնում է արձանագրել, վոր այժմ կուսակազմակերպութեան աշխատանքը գնում է ավելի թույլ լարվածութեամբ, քան հատուկ յետամնյակում:

Այդպէս է դա, թե՛ այդպես չէ: Անպայման այդպես է: Մեզանում միշտ (և դա բնական է) բոլորը—թե տընտեսավարները և թե արհմիութենական կազմակերպութեանները—հավասարվում են կուսակցական կազմակերպութեան. սրա աշխատանքից, սրա ուշգիւրի գորահավաքումից ել կախված է բանվորական մասսաների մոբիլիզացիան: Յեւ ինչքան ել խոսեն այն մասին, թե Իոն-բասի բոլ ր կուսակազմակերպութեանն է վտարի յեն հանված ածուխի համար պայքարելու, անկասկած է, վոր այս տեսակետից պարզապես անբավարար բան է արված:

Պետք է ուղղակի ասել, վոր շնորհիվ տնտեսական-տեխնիկական ղեկավարութեան բացակայելուն, մենք, առանձին հանքախորշերում մեքենայացման և աշխատանքի կազմակերպման բնագավառում մի շարք նվաճումների հետ սխալն ունենք անմխիթար պատկեր: Հանքահորերում կան անթիվ անկարգութեաններ, ղիսցիպլինայի բացակայութեան և այլն: Հանքահորերում տեխնիկան վատից ել վատ է գրված:

Մասնագետները գանգատվում են, թե նրանց չեն յենթարկվում: Մասերի վարիչները գանգատվում են տասնապետներից, տասնապետները—բրիգադիրներից, իսկ տեխնիկական ղեկավարները—բոլորից: Հանքահորի վարիչը պատշաճ ոժտանդակութեան չի գտնում կուսակցական ու արհեստակցական կազմակերպութեանների կողմից: Բոլորը ղեկավարում են, բայց, վոչ վոք վոչընչի համար պատասխանատու չէ: Հանքահորերում դուք կարող եք հաճախակի այդպիսի պատկեր տեսնել:

Միանգամայն հասկանալի չէ,—վերջացնում է իր ղեկուցումն ընկեր կոսիորը,—վոր այժմ, մանավա՞ղ մեր կազմակերպութեաններում, պահանջվում է աշխատանքի մեջ ամենամեծ ձկուն էլ յուն, իր ուշգիւրը ճիշտ դասավորելու և մի կեսի խփելու հմտութեան, պահանջվում է ապահովել ծրագրի կատարումը:

Հանքահորերում տեխնիկայի կառավարման գլխավոր ուղղակի, այսինքն այնպիսի կառավարման, վորը մեխանիզմների և ֆիզիկատարութեանը բարձրացնի մինչև ամենաբարձր աստիճան,—գտնվում է մաներային արվեստի մեջ, մեքենայացումն իրականացնելիս: Որինակ, ի՞նչ են արել շատ հանքահորերում (թեկուզ Գոլուբեկայի № 22-ում—Կարտաշի սիստեմի հայրենիքում): Այնտեղ թողել են հին ձևով աշխատող զանգվածները (Նաբա) և փորող մեքենաները մի անգամից փոխադրել են յոթը գանգվածի վրա, վորոնք աշխատում են Կարտաշի սիստեմով: Կարտաշի սիստեմը կտրուկ փոփոխութեան է մտցնում փորող մեքենաների աշխատանքի մեջ: Այս սիստեմը կիրառելիս մեքենան չի սպասում, մինչև վոր հավաքեն նրա կտրած ածուխը, այլ գնում է զանգվածի յերկարութեամբ (ածխաշերտի թափվելու գծով դեպի վեր), իսկ ածուխի հավաքման և կոնսերվիցիայի շարժման հետ մեկտեղ: Փոխանակ զանգվածը զանգվածի յե անից փոխադրելու մեխանիզմների ոգտագործման նոր սիստեմին, յուրաքանչյուր անգամ հաշվի առելով սխալները և նըրանց հիման վրա սովորելով՝ յուրաքանչյուր հետևյալ զանգվածում նոր սիստեմ մտցնելիս, վորոշեցին նոր սիստեմը մտցընել մի անգամից: Բան դուրս չեկավ: Հանքահորերի արտագրութեանը խիստ պակասեց: Ուրիշ կերպ չեր կարող լինել վորովհետև մեծագույն հեղափոխական փոփոխութեանը մտցրին առանց նախապատրաստութեան, չհարմարեցնելով տեղական կոնկրետ պայմաններին: Տեխնիկան ներդաշնակել աշխատանքի սոցիալիստական կազմակերպութեան հետ նշանակում է ամեն անգամ, յուրաքանչյուր առանձին դեպքում հաշվի առնել և կշտադատել, թե ուշգիւրի ի՞նչպիսի դասավորութեանն է նպատակահարմար գործադրելով այլ զանգվածում, անխաղախի կազմվածքի այսինչ և այնինչ բնական պայմաններում, այսինչ ու այնինչ մեքենաներով: Իհարկե այս կոնկրետացումը ի կարող պատահական լինել: Բոլոր առանձին դեպքերը, բոլոր առանձին ոգակները պետք է պլանային կերպով կապված լինեն իրար հետ: Մակայն յուրաքանչյուր առանձին դեպքը, մեքենայացման յուրաքանչյուր առանձին ճակատասմար պահանջում են անհատական, հատուկ, կոնկրետ մոտեցում: Թիթև մոտեցումը, ինչպես, որինակ մատնանշած Գոլուբովկա № 22-ում բոլոր զանգվածները մի անգամից նոր

սխտեմի փոխադրելը, կամ թե բոլոր վորակյալ՝ սյուն գցողներին և ածխահատներին ձեռքով ածուխ կտրելուց դեպի վոչ վորակյալ աշխատանքի փոխադրելը—ածուխի գիղումը մեքենայացված դանդավածում,—այդպիսի մոտեցումն անպետք է:

## „ԱՆԿԱՐԳՈՒԹՅԱՆ“ ԳՎԸՏՆԻԲԸ

Ածուխի հանման մեքենայացումն արտադրութեան պրոցեսը բաժանում է առանձին ուղեբացիաների և հենց գրանով թույլ է տալիս ավելի լավ դիտել ամբողջ պրոցեսն իր առանձին մասերով, վորպեսզի այնուհետև նորից միացնել այդ մասնակի ուղեբացիաները, բայց միացնել նոր ձևով, միացնել մեքենայի ոգնութեամբ, աշխատանքի բարձր կազմակերպված մեթոդների ոգնութեամբ: Այսպիսով նախ տեղի յե ունենում աշխատանքների հին սխտեմի բաժանումը մասնակի գործողութունների, այս—այդ գործողութունների միացումը բարձրագույն հիմունքով: Զեռքով ածուխ կտրելու ժամանակ ածուխի հանման և նրան միջանցք հասցնելու ամբողջ աշխատանքը կատարում են յերկու կատեգորիայի բանվորներ.—ածխահատը և ահնակավարը: Փորոզ մեքենան և կոնվեյերն աշխատանքը բաժանում են շատ մասերի: Աշխատանքի ամենադժվար մասը—փորումը—մեքենան իր վրա յե վերցնում: Ածուխի կոտրատելը, վոր առաջ կատարում եր նույն ածխահատը, կազմում է յերկրորդ գործողութունը (ձեռքով կամ դիսամիտով): Կոնվեյերի վրա դիզելը—յերրորդ ուղեբացիան է, իսկ կոնվեյերի աշխատանքը—չորրորդը: Յեթե մի մարդ կատարում է մի քանի աշխատանքային ուղեբացիաներ, սրանք կատարվում են շատ թե քիչ լավ, նա ինքն է կանոնավորում այդ ուղեբացիաները: Յերբ գործողութունները բաժանված են, առաջ է գալիս դժվարութուն—այնպես պետք է անել, վոր մեկը յետ չմնա մյուսից, նրանից առաջ չանցնել, այլ նրանք հավասարաչափ դնան իրար հետևից և, յեթե կարելի յե այսպես, սանը, յուրաքանչյուրն իր վտուր դնի նախորդի վտուր տեղը: Սրանուհետ է մեխանիզմների աշխատանքի կազմակերպման ամբողջ ուղն ու ծուծը: Պետք է տիրապետել այն պրոցեսին, վորը կատարում է արդեն վոչ թե մի մարդ,—ածխահատը, այլ մարդկանց մի խումբ, մեքենաների միջոցով: «Անկարգութուն»

—սա սիրված խոսք է նրանց համար, ով չի կարողանում տիրապետել այդ կոմբինացիային Սակայն դժվար չե գտնել այդ «անկարգութեան» դադանիքը: Դա մի բնական խոչնդոտ չե, ինչպիսին է որինակ ածուխի ծածկոցի թուլութունը, այլ առանձին աշխատանքային ուղեբացիաների այնպիսի հարմարեցման անկարողութուն է, վորը կարող է հաղթահարել այդ բնական խոչնդոտը: Զե վոր այդպիսի բնական խոչնդոտներ միշտ յեղել են հանքահորում: Սակայն ձեռքով ածուխ հանելիս նրանց հեշտութեամբ են հաղթահարել, վորովհետև քիչ անցումներ են յեղել մի գործողութունից մյուսին, քիչ յեն յեղել այն հանգույցները, վորոնք մի վորևե կվալիֆիկացիայի բանվորին կապել են մեքենայի, կամ ուրիշ կվալիֆիկացիայի բանվորի հետ: Իսկ այժմ պրոցեսը բաժանված է մասերի, մարդու և մեքենայի միջև ավելի շատ «հանգույցներ կան և այս հանգույցներում ավելի հաճախ է կտրվածք է խառնաշփոթութուն լինում: Անկարգութունները և վոչ մի «րեկտիվ» պատահա չեն հանդիսանում և ամբողջ գործը կայանում է միայն նրանում, վորպեսզի կարողանալ ամեն անգամ հանգույցը կապել հենց այն յեղատակով, վորն ամենից նպատակահարմարն է տվյալ կոնկրետ պայմաններում:

Ինչպիսի անկարգութուն էլ վերցնենք (յեթե մի կողմ թողնենք դիտակցական ֆաստարարութունը), նա առաջ է յեկել միայն մի քանի ժամով առաջ նախտեսելու ցանկութեան բացակայութեան և անկարողութեան հետևանքով: Անկարգութեան սկզբը միշտ լինում է մի պատիկ, չնչին պակասութուն, իսկ նրանից հետո հաճախ լինում է կորուստ: Յերբ արտադրութեան ամբողջ պրոցեսը կենտրոնացված է մի մարդու ձեռքում (ածխահատ), կամ մարդկանց մեծ խմբակի ձեռքում, վորոնք դնում են իրար կողքի, բայց իրարից անկախ (բոլոր ածխահատներն իրար հետ չկապված հանքախորշերում), այն ժամանակ փոքրիկ թերութունը վերացնում է մարդն իր աշխատանքի ընթացքում: Իսկ յերբ աշխատանքի մեջ գոյութուն ունի մարդու և մեքենայի փոխադարձ կապը, այն ժամանակ փոքրիկ անկարգութունը, յեթե ժամանակին չվերացվի, անպայման կմեծանա. մեքենան գնում է իր ընթացքով, մարդն էլ իր, իսկ վորովհետև նրանց քայլերը բոլորովին էլ միտեսակ չեն, նրանք անպայման կկտրվեն իրարից:

Նախատեսելու անկարողութունն ու պորտուներով բնու-

բոշ թուլութունն է: Վախենալով մտացածին դժվարութուններէց, ոպորտունիստն այնուամենայնիվ չի տեսնում, թե վճիռ կողմ կգնան բոլոր բազմազան ռաբրիացիաները և վճիռ կետում կմիանան: Ոպորտունիստը «նախատեսնում է» միայն գործի մի կողմի զարգացումը, բայց չի տեսնում մյուս կողմերի զարգացումը, ուստի և անխուսափելիորեն սխալվում է, յերբ փորձում է ասել, թե ինչ է լինելու վաղը: «Անկարգութունը» տակից գլուխ ոպորտունիստական է: Դա տեխնիկական անկարգութունն է, ինչպես անվանում են նրանք, ով չի տեսնում դրա իսկական ելութունը: Դա արտադրութեանը տիրապետելու ոպորտունիստական անկարգութեան արդյունք է: «Անկարգութունը» — կապիտալիզմի պտուղն է: Կապիտալիզմն իր արտադրութեան անարխիայով մարդու մեջ դաստիարակել է խոնարհ վերաբերմունք դեպի տարեբայնութունը, դեպի անհայտը, դեպի պատահականութունը: Բուրժուազիայի համար ճգնաժամը նույնպես անկարգութուն է թվում «փառահեղ» կազմակերպված կապիտալիստական թագավորութեան մեջ: Բայց մենք գիտենք, վոր ճգնաժամը «անկարգութուն» չէ, այլ կապիտալիզմի որդանական հիվանդութունը: Սոցիալիստական արտադրութեանը յուրահատուկ է անկարգութունը, սա դեռ մնացել է այնքան, վորքան մեր միջավայրում մնացել են կապիտալիստական արտադրութեան անարխիայի ստեղծած ջոկորութունները: Անկարգութունը — դասակարգային և վոչ թե միայն տեխնիկական յերևույթ է:

Կապիտալիզմն անդոր է կռվել դրա դեմ, իսկ մենք ունենք բոլոր հնարավորութունները՝ մանկական կարմրուկի դեմ մեզ պատվաստելու համար: Այդ պատվաստումը գիտական նախատեսումն է, թե ինչպես պիտի ընթանան արտադրութեան պրոցեսները (վոչ թե մի պրոցեսս, այլ բոլոր պրոցեսաները) և վճիռ կետերում կամ հանգուցյներում պիտի հանդիպեն իրար: Այստեղ ամենազլխավորն է նախատեսել «հանգուցյները», հանդիպման կետերը: Կարելի չէ հիանալի գիտենալ տեխնիկան, հիանալի նախատեսել մեքենայի ընթացքն և այնուամենայնիվ վերջը դեմ առնել անկարգութեան: Ինչ՞ուրովհետև բացի մեքենայից, արտադրութեան պրոցեսսին մասնակցում են մարդիկ և պետք է գիտենալ վոչ միայն մեքենան, այլ և ոարդկանց և վոր ամենից կարևորն է — մարդկանց և մեքենաների միջև յեղած կապը:

Այստեղից պարզ է, թե հանքահորերի կազմակերպութունների և յուրաքանչյուր առանձին ածխահայր համար ինչ նշանակութուն ունի հանքախորշում մեքենայի ու մարդու միջև յեղած կապի պարզ հասկացողութունը՝ արտադրութեան պտութեանը հեղափոխականորեն տիրապետելու տեսակետից: Վոչ միայն գիտենալ մեքենան, այլ և հասկանալ նրա և մարդու միջև յեղած նոր կապը — այսպես է խնդիրը:

## „ԻՐԵՂԵՆ ԱՊԱՅՈՒՅՑՆԵՐԻ“ ՅՈՒՅԱԿ

Իսկապես, հանքահորում «անկարգութունների» կոնկրետ որինակները պարզորոշ վկայում են այն մասին, վոր նրանցից ամեն մեկն առաջ է յեկել դատարկ բանից: Բայց տեխնիկական ղեկավարները, վորոնք պարտավոր են հսկել, վորպեսզի մարդկանցից ու մեքենաներից ստեղծված սխտեմք «չցրվի» զանազան կողմեր, չեն նկատել այս բանը — և փոքրիկ թերութեանը վերջացել է պլանում խոշոր ճեղքվածք առաջացնելով: Բերենք այստեղ միայն մի որվա — մարտի 13-ի ընթացքում Իոնրասի առանձին հանքահորերում պլանի կատարման տեխնիկական խանգարումների ցուցակը: —

«ՍԵՎԿԱՎՈՒԿՈՒ» Արտեմի հանքահոր: Չկան պահեստի մասեր փորող մեքենայի համար, այդ պատճառով 125 տոնն ածուխի կորուստ: 74-րդ լավայի արհեստական իջեցումը — 150 տոննի կորուստ:

Հոկտեմբերյան հանգանոր: Յերրորդ թեքվածքում, տասնիններորդ խորշում 1½ ժամ չկար հոսանք — 38 տոնն կորուստ: Քսաներորդ խորշում — հերթապահ տասնապետի անփութութուն, սխալ են զրված վանդակները. 42 տոննի կորուստ: Ոժանդակ թեքվածքում տեխնիկական հսկողութեան թուլութուն, — 98 տոննի կորուստ: Չորրորդ թեքվածքում տեխնիկական հսկողութեան անփութութեան շնորհիվ — 21 տոննի կորուստ:

Վորովսկու անվան հանգանոր: Ածխահատների պակասութուն: 66 տոննի կորուստ:

№ 4 հանգանոր: Նոր մարդկանց պատճառով վազոնիկների աշխատանքի անկարգութուն: 275 տոննի կորուստ:

ԱՐՏԵՄՈՎԻ ՌԱՅՈՒ: Գորովսկու հանքահորային վարչութուն: № 9 հանքահոր: № 2 հանքահորի խորշի ցածրացում: № 4 հանքամասում ժայթքից ջուրը:

Շչերբինի ՀՎ. «Սեփիրնայա» կոչված հանքահոր, № 16 հանքամասի դաշտի ցածրացում:

Արսենի անվան հանքահոր: «Գուգայա Պուգաչովկա»-ի միջանցքում փլվածք չիղավ:

Կալիբրնյան ՀՎ: Կալիբրովկա հանքահոր: Պարանը վերանայվում է: 4 ժամ պարապուրդ: 120 տոննի կորուստ: № 18 հանքահորում դանդաղ աշխատանք: 250 տոննի կորուստ:

Գրիբինսկի ՀՎ: № 1 հանքահոր: Հյուսիսային զանգվածի ցածրացում:

ԴՈՒԲՍՍՆՏՐԱՑԻՏ: Սվերդլովսկի ՀՎ: № 14 հանքահոր: Թեքվածքում կտրվեց պարանը:

№ 17 հանքահոր: Կոնվեյերային թերթերը կտրվեցին:

№ 2 հանքահոր—Վոյկովի անվան: Ածխափոր բանվորները դուրս չեկան աշխատանքի:

Վոյոդարսկու անվան հանքահոր: Թեքվածքում ջարդվեցին սելսերը:

Ռովենցեցկի ՀՎ: № 10 հանքահոր: 40 ածխափոր բանվորներ դուրս չեկան աշխատանքի:

№ 15 հանքահոր: Աշխատանքից ինքնագրուխ հեռացան ձի բջողները, ցածրացում 19-րդ հանքամասում. 2 ժ. պարապուրդ: Բակովսկու ՀՎ: № 7 հանքահոր: Կտրվեց բրիմսերերգի պարանը: 2 ժամ պարապուրդ:

№ 14 հանքահոր: Իններորդ զանգվածը կարգի յե բերվում նրա նստելուց հետո:

Խոուսայսկի ՀՎ: № 1 հանքահոր—Աննենսկի: Հանքի քանգումը զանգվածի նստելուց հետո. ժամանակին ածուխ չկտրվեց:

Փորոզները ժամանակից շուտ հեռացան:

Սալիմոյի ՀՎ: № 18 հանքահոր: Բսանմեկերորդ զանգվածում տաշտակների ճեղքվածք: 1<sup>1</sup>/<sub>2</sub> ժամ պարապուրդ: Բանվորները ժամանակից 1<sup>1</sup>/<sub>2</sub> ժամ առաջ հեռացան աշխատանքից:

Շվարցեվսկի ՀՎ: № 1 հանքահոր: Ջարդվեց փորող մեքենան: Բոլոր հանքահորերում բանվորներն աշխատանքի չգնացին:

Չիսոյակովսկի ՀՎ: № 1 հանքահոր: Կոնվեյերների տեղափոխություն 2-րդ զանգվածում: Գործը յետ ընկավ 2 ժամ 30 րոպե:

№ 3 հանքահոր: Հանքահորում ջարդվեց բարձրացնող մեքենան: Գործը յետ ընկավ 1 ժամով:

№ 23 հանքահոր: 2-րդ լավայում կոնվեյերն անկարգ դրության մեջ է:

№ 27 հանքահոր: Կոնվեյերը քանդվեց: Գործն յետ ընկավ 2 ժամով:

Յուրինսկի ՀՎ: № 8 հանքահոր: Ջարդվեց փորող մեքենան: № 9 հանքահոր: Բանվորները չեկան աշխատանքի:

№ 19 հանքահոր: Նույնպես: ԼՈՒԳԱՆՍԿԻ ՌԱՅՈՆ: Կադիևսկու ՀՎ: «Իլյի» հանքահոր:

«Ատաման» հանքաշերտ: Արևելյան 1-ին, 2-րդ, 3-րդ զանգվածի կոնվեյերի տեղափոխություն պատճառով 2 ժամ պարապուրդ: Գլխավոր միջնացքում ջարդվեց մատորի պլիտան: 2-րդ լավայում ճեղքվեց ծածկը: Վագոնները դուրս չեկան սելսերից: 180 տոննի կորուստ:

Արսենովսկի ՀՎ: № 2 հանքահոր: Աշխատանքի չգալու պատճառով: Բանվորական ույթի պակասություն: Թույլ արտաքրողականություն: 209 տոննի կորուստ:

№ 4 հանքահոր: Սիգնալիզացիան անկարգ վիճակում է Հյուսիսային թեքվածքում: Բանվորական ույթի պակասություն: Աշխատանքի չգալու դեպքեր: 195 տոննի կորուստ:

Սալիմյան ռայոն: № 10 հանքահոր: Տաշտակները կտրվեցին առաջին և յերկրորդ հերթերի աշխատանքի ժամանակ: 75 տոննի կորուստ:

№ 1 հանքահոր: Բանվորները չեկան աշխատանքի: 51 տոննի կորուստ: Կենտրոնական թեքվածքում փոխվեց պարանը: 100 տոննի կորուստ:

Մոսպիմոյի հանքահոր: 56 ածխափոր բանվորներ չեկան աշխատանքի: 194 տոննի կորուստ: Պակասում են 126 բանվորներ: 1,057 տոննի կորուստ:

Պեսոլսկու ՀՎ: № 5 հանքահոր: Արևմտյան զանգվածում չորրորդ հորիզոնում մոտորն աշխատում է ընդհատումներով: 50 տոննի կորուստ: Յերկրորդ հերթի աշխատանքի ժամանակ յերկու անգամ շրթան դուրս ընկավ մեքենաներից: 1 ժամ դադար: 60 տոննի կորուստ:

№ 6 հանքահոր: Բեռների բացակայություն: 50 տոննի կորուստ: Ճանապարհների վատ դրության շնորհիվ 275 տոննի կորուստ:

№ 8 հանքահոր: Կտրվեց տաշտակը յերկրորդ հերթի աշխատանքի ժամանակ: 100 տոննի կորուստ:

№ 29 հանձնարար: Առաջին Արևելյան զանգվածում փուլ յեկավ ծածկը: 90 առնչի կորուստ:

Տեխնիկական «անկարգությունների» այս լուսանկարը, զոր տվինք դեռ ևս վոչ լրիվ չափով, իր ժամանակին ղետեղվել է «Ձա ինդուստրիալիզացիոն» լրագրում: Յեվ, պետք է ինկատի ունենալ, վոր այն որը, յերբ տեղի յեր ունենում «լուսանկարումը», մարտ ամսի համար սովորական որ եր Դոնբասում: Այդ որը, մարտի 23-ին, Դոնբասը տվեց մարտի համար հանույթի միջին տոկոս—56,7:

Այս լուսանկարում շարունակ աչքի յե դարնում հետևյալը.—կոնվեյերի շարդվածք, զանգվածի նստելը, բանվորների հեռանալը ժամանակից առաջ, վերանորոգություն և ընդհանուր պատճառ—տեխն. պերսոնալի թերի հսկողությունը: Հանքահորի աշխատանքի նոր պայմաններում տեխնիկական պերսոնալի (մանավանդ ստորին) ղերը խոշոր չափով տարբերվում է նախկին պայմաններում նրա ունեցած ղերից: Յեթե առաջ նա հաճախակի հանդես եր գալիս վորպես վերահսկիչ, վորն ըստուգում եր հանքահորում կատարվող աշխատանքն և ավելի շատ հետևում արտադրության հետևանքին, քան թե ընթացքին, ապա այժմ տեխնիկը, տասնապետն ու բրիգադիրը կատարում են նաև կարգավորողի պարտականությունները, լարում են բարդ, մեքենայացված որգանիզմն և ապահովում նրա ճիշտ ընթացքը: Կարգավորողը, վորը գործի յե գցել դադգյահը, աշխատում է սրա գործողության առաջին բոպեններում նախատեսել, թե արդյոք դադգյահը չի՞ քմահաճելու վաղը, կամ վաղը չե՞ մյուս որը: Իրա համար նա ականջ է դնում, թե արդյոք չկան ընդհատումներ, ստուգում է դադգյահի աշխատանքը նրա ամեն տեսակ ընթացքի ժամանակ, զիտենալով, զոր դադգյահը գործի գցելու մոմենտին ամենաչնչին անճշտությունը հետագայում առաջ կբերի շարդվածք:

Ավտոմատացած արտադրության մեջ կարգավորողի ղերը չափազանց պատասխանատու յե: Կոնվեյերի շարդվածքը, բարձրացնող մեքենայի պարանի կտրվելը, կոնվեյերի տեխափոխության ժամանակ ուշացումը, զանգվածի իջնելը, փորող մեքենայի պարապուրդը—սա չկարգավորված դադգյահի նույն շարդվածքն է, վորի վրա հսկողություն չի յեղել գործի գցելիս: Իհարկե, տեխնիկն ամբողջ ժամանակ չի կարող նստել զանգվածում: Մենք ղեռ այդքան տեխնիկներ չունենք, Սակայն

զանգվածի աշխատանքի գցելու առաջին որերում, նոր մեթոդներով աշխատելու համար—նրա վրա պիտի լինի անընդհատ հրակողություն, վորպեսզի ամբողջ պրոցեսը սկզբից մինչև վերջ ստուգվի: Այժմ հասկանալի յե դառնում № 22 Գոյուբովկայի անհայողությունը, վորը վորտեղ եր մի անգամից յոթը զանգված փոխադրել կարտաշեի սխտեմին: Մի անգամից գործի գցել յոթը նոր, բարդ «կառուվածքներ», յերբ անհրաժեշտ է հենց առաջին քայլերից հետևել յուրաքանչյուր նոր զանգվածին,—№ 22 հանքահորի կազմակերպությունն այդքան ուշ չուներ: Հարկավոր եր յուրաքանչյուր հետևյալ զանգվածը նոր մեթոդների փոխադրել այն բանից հետո, յերբ նախորդն արդեն լիովին ընթացք է ստացել, վորն ստուգվել և ճիշտ է դուրս յեկել: Հանքահորի կազմակերպությունները, մանավանդ արհմիութենական, պետք է վաղորոք նախատեսեն յին այս բանը, ճիշտ այնպես, ինչպես տեխնիկը պետք է նախատեսնի «անկարգությունը»: Նրանք չնախատեսեցին: № 2 Գոյուբովկայի դառը պետք է ոգուտ բերի մյուս հանքահորերին:

„ԱՆԿԱՐԳՈՒԹՅԱՆ“ ՎՆԱՍԱՐԱՐԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ

Այստեղ բերված «անկարգությունների» լուսանկարից, վոր ղեպքն էլ վոր վերցնե՞ք, նա նոր ուշով պետք է ցույց տա միևնույն բանը—տեխնիկը չի սովորեցրել բանվորին ճիշտ վարվել մեխանիզմի հետ, հանքահորի կազմակերպությունները չեն սովորեցրել բանվորներին աշխատել մեխանիզմով: Սա առաջ է գալիս նրանից, վոր ղեկավարությունը քավականաչափ չի հարմարեցված յուրաքանչյուր տվյալ հանքամասի բարդ հանգամանքներին: «Լուսանկարում» յեղած կարճ Փրագան Աննենսկու հանքահորերի վարչության № 1 հանքահորի մասին տալիս է մի ամբողջ պատկեր այն բոլորի, ինչ վոր կատարվել է հանքահորում մաբտի 23-ին.— «Իջնող զանգվածի քանդում, վոչ իր ժամանակին հատում, փորողների հեռացումը ժամանակից առաջ»: Դե՞վար չե՞ նույնիսկ հեռվից պարզել, թե այստեղ վորքան շեղումներ են յեղել «տակտից», քանի անգամ մեքենաներն ու մարդիկ սխալ են փոխել վտանգները, նախ՝ զանգվածի նստելը, այսինքն ճեղքվածք սյուներ գցելու և հանույթի միջև յերկրորդ՝ ճեղքվածք ածխահանման և

ածխահամարման աշխատանքների միջև, յերրորդ, նոր ճեղքվածք հավաքման աշխատանքների ու ամխահատման միջև:

Յուրաքանչյուր հանքահորում պատահարների այսպիսի քիչ թե շատ լրիվ պատկեր կարելի չի յերեակալել Շրուսանկաբի» հիման վրա, բայց գործը սրանով չի սահմանափակվի: Անհրաժեշտ է յուրացնել այն միտքը, վոր «անկարգությունն» կորուստի սկիզբն է: Այն ժամանակ չի լինի այնպիսի անփութ վերաբերմունք դեպի «անկարգությունները», վորը գոյություն ունի այժմ, այն ժամանակ վոչ վոր այդ անկարգությունները չի համարի սովորական բան: Յուրաքանչյուր կրկնվող «անկարգությունն» արդեն մի ուղակի ապացույց է հանցավոր անփութության, քանի վոր նա նշանակում է, վոր բուժումը չեղել է վոչ վերջնական, վոր հիվանդությունը մեղմացվել, բայց չի բուժվել:

Բանվորների նոր մասսաներին արտադրության գիտությունը սովորեցնելու պարտականությունն առաջին հերթին, ընկնում է արհմիությունների վրա: Այդպիսի դաստիարակության սկիզբը պիտի լինի հեռույալ կանոնի յուրացումը.— յեթե դու կտեսնես մի ամենաչնչին պակասություն, վորն առաջին հայացքից «մի կերպ կղզվի», անհապաղ ուղղիր: Չնչին անհարթությունը մեծ չափով կհետաձգի աշխատանքը: «Անկարգությունն» խոտքն ու հասկացողությունը պետք է ընդմիշտ վտարել հանքահորից:

«Անկարգությունը» յեղել է ֆլասարարների սիրված գենքը: Նրանք փորձում եյին անհամապատասխանություն մտցնել վոչ միայն արդյունաբերության զանազան ճյուղերի վարգաքման միջև, այլ և մեկ ճյուղի սահմաններում— արտադրական պրոցեսի զանազան մասերի միջև: Ըստ ֆլասարարների ցուցմունքի, նրանք գործադրում եյին մի այսպիսի սխառնում.— «Կապիտալիստայ» հանքահորում շարքերից դուքս յեկավ ջրմուղը և հանքահորում սկսեց «ջուր լցվել»: Յեւ կարգադրեցի անհապաղ կերպով այնտեղ ուղարկել համապատասխան վորակով բանվորի, վերանորոգում կատարելու համար, բայց միևնույն ժամանակ լոցի այն մասին, թե ինչ գործիքներ ու նյութեր պիտի վերցնի այն բանվորը, վորը գնում է հանքահորում վերանորոգում կատարելու, մեխանիզմը կարգի գցելու համար: Յեւ, ինչքան վոր կարող եյի, հաճախակի տեղեկանում եյի վարպետից և շտապեցնում, վոր նա

չուտ բանվոր ուղարկի: Արտաքուստ ստեղծվում եր մի այնպիսի տրամադրություն, վոր յես ձեռք եմ առնում յեռանդուն և շտապ միջոցներ: Իսկ փաստորեն, գործնականում այդպիսով մարդ ուղարկելը վոչ միայն չեր տալիս մի վորեւե ԵՖՖեկտ, այլ և ձգձգում եր վերանորոգումը: Յեւ ամուսի հանումը վիժում եր, բանվորն իրի այդպիսով վերանորոգման ուղարկել տեղի յեր ունենում սխտեմատիկ կերպով որեցոր»:

«Անկարգության» ֆլասարարական բնույթը գտնվում է հենց «անկարգության» մեջ, այնպես վոր, մեծ դժվարությամբ է հաջողվում չարամտությունը զանազանել անփութությունից: Ֆեվ նա առանձնապես ցայտուն կերպով է բացվում շնորհիվ ամխահանման պրոցեսի բաժանման, մեքենայացում մտցնելուն: Ածխահանումը բաժանված է մի շարք պարզ ոպերացիաների, վորոնցից յուրաքանչյուրը կատարում է վորոշ մարդ, վորոշ մեքենա: Այդ պրոցեսի զանազան մասերի աշխատանքի մեջ յեղած անհամապատասխանությունն իսկույն աչքի չե ընկնում: Միաժամանակ այդ տեսակ յուրաքանչյուր չնչին անհամապատասխանություն իր մեջ կրում է մեծ կորուստի սաղմը: «Անկարգությունն» առաջվանից ավելի հեշտ է նկատել և առաջվանից ավելի կարևոր է նրան կանխել:

### ՎԱՊԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՒՄ ԵՆ

Փորոզ մեքենան և կոնվեյերը ամխահատի աշխատանքի մեջ լիակատար հեղափոխության սկիզբ դրին: Բայց միայն սկիզբ: Շնորհիվ փորոզ մեքենայի ու կոնվեյերի, հանքահորում սահմանվեց ֆունկցիաների բաժանումը, վորոշ չափով նման անկատի արտադրության մեջ յեղած «ֆունկցիոնալային»: Առանձին ոպերացիաների կապը, վոր դեռ յերեկ մարմնացվում եր աօխահատի կողմից,— խորտակվեց: Այստեղից ել մեքենայացման դժվարությունները: Հարկավոր է լինում այդ կապը ստեղծել ամուսի փորման, կարատման, գիզման ու տեղ հասցնելու միջև, նոր հիմունքներով:

Իոնբասում տեխնիկային իսկապես բոլշիկորեն տիրապետելու առաջին քայլը կարտաշելի, կասաուրովի և Ֆիլիմոնովի սխառնն եր: Այս սխառնն արգեն կիսով չափ խլում է «անկարգության» վտաքի տակի հողը: Վերացվում է ամենա-

զլխավոր «անկարգությունը»—հասարակ փորող մեքենայից, վորը, բանից դուրս ե գալիս, կարող ե աշխատել իր բոլոր 24 ժամերին... Առաջ մեքենան փորում եր, նրան կանգնեցնում եյին, սկսում եյին մի կողմ տալ ածուխը, հետո հավաքում եյին ածուխն և հետո նորից բանեցնում փորող մեքենան: Այժմ փորման ե մաքրման աշխատանքների միջև դադարը բավականաչափ պահանջոված ե: Մաքրման աշխատանքները կատարվում են փորելուց անմիջապես հետո: Բայց նշմարվում ե նոր դադար — հանքախորշի, վորտեղ կատարվում ե փորումն ու մաքրման աշխատանքն և կոնվեյերի միջև: Վորքան վոր խորանա հանքախորշը, կոնվեյերն այնքան պետք ե իր բոլոր համատարած մետաղյա ժապավենով մոտենա հանքախորշին (փորման գծին): Կոնվեյերը չի կարող մաս-մաս մոտենալ այդ գծին: Ինչպիսիք վոր նա պառկած ե հարյուր հիսուն ու յերկու հարյուր մետրանոց զանգվածի յերկարությամբ, այնպես ել յա պետք ե տեղափոխվի իր ամբողջ յերկարությամբ, մեկ-յերկու մետր մի կողմ, հանքախորշին ավելի մոտիկ: Բացի կոնվեյերի ծանրությունից, այստեղ առաջնակարգ նշանակություն ունի սյուներ գցելու սխտեմը զանգվածում: Չե՞ վոր կոնվեյերի ու հանքախորշի միջև յեղած փոքրիկ տարածությունը լիքն ե մի շարք սյուներով, վորոնք պահում են ծածկը: Կոնվեյերը պիտի բաժանվի մասերի, վորպեսզի յուրաքանչյուր մասը, յուրաքանչյուր տաշտակն անցկացնել սյուների միջով և արդեն սյուների մյուս կողմից, հանքախորշին մոտիկ, նորից իրար մեջ ամրացնել կոնվեյերի տաշտակները: Ոտարեկրացի մասնագետ Լիբհարդտը վճռեց այդ խնդիրը: Նա, նախ կոնվեյերի տակ ե դնում գլանակները, վորոնք նրան թույլ են տալիս հեշտությամբ դնալ գետնի վրայով, յերկրորդ, փոխում ե ամրացման կառուցվածքն այնպես, վորպեսզի կարելի լինի անհրաժեշտության դեպքում հանել կոնվեյերին ամենամոտիկ սյուների մի շարքը, առանց ծածկը «նստեցնելու» վտանգի: Այժմ կոնվեյերը կարող ե շարժվել անբաժան տաշտակներով և կոնվեյերի տեղափոխման համար (այժմ նա արդեն ձեռքերով չի տեղափոխվում) ծախսվում են վոչ թե ժամեր, այլ րոպեներ: Լիբհարդտը յերկրորդ քայլն արեց անխահանման բաժան-բաժան ոպերացիաների հեղափոխական միացման ճանապարհին: Նա վերացրեց կոնվեյերի աշխատանքի ընդհատումները, վորոնք հետևանք եյին փորումից կոնվեյերի կտրված լինելուն: Այստեղից արդեն հե-

ուռ չե այն միտքը, թե կարելի յե աշխատանքի այս մասում, կոնվեյերի տեղաշարժման վրա մարդկային ծանր աշխատանքը փոխարինել մեքենայական եներգիտյով: Այս միտքը, վոր զրույցների ժամանակ լսել ենք շատ ածխահատներից, գործնականում իրականացրել ե Կոիլենկոյի անվան հանքահորի մասնագետների մի խումբ: Իրենց յեղանակի մասին նրանք գրում են հետևյալը. —

«Մենք, Կոիլենկոյի անվան հանքահորի արտադրագետ ինժեներներս, ստեղծել ենք կոնվեյերի տեղափոխության մեխանիկական յեղանակ: Այս հաղթանակը հնարավորություն ե տալիս Դոնբասի համար վճռողական որերում մի քանի անգամ բարձրացնել ածխահանման տեմպերը:

Գաղտնիքը կայանում ե հետևյալում. —

Լիբհարդտն առաջարկեց կոնվեյերը չքանդված կառուցնալով տեղափոխելու յեղանակը, իսկ մենք ավելի առաջ գնացինք և Լիբհարդտի յեղանակի համաձայն կոնվեյերի տեղափոխման համար աշխատող մարդկանց փոխարինեցինք փորող սեքենայի ելիկորո-եներգիտյով:

Գլանակներով աշխատող սեղաների վրայով ընթացող սայլակների թանկարժեք մոնտաժը մենք փոխարինեցինք հասարակ սայլակներով և հանքային հին սեղաներով, վորոնք և վոչ մի արժեք չեն ներկայացնում:

Լիբհարդտի յեղանակը մեզ համար դժվար եր, մասնավորապես այն պատճառով, վոր նա պահանջում եր դեֆիցիտային նյութերի—անկյունավոր յերկաթի, գլանակների, պլանկաների մեծ քանակություն: Բացի դրանից, անհրաժեշտ շրջանակները, ունենալով փոքր ծավալ, ծածկվում են ածխափոշիով, կորչում են և այլն: Մենք վորոշեցինք, վոր կարելի յե ոգտագործել գլանակների ու շրջանակների փոխարեն հին սեղաները, նրանցից շինելով սայլակներ և տաշտակները տեղափոխելու ժամանակ մարդկանց փոխարեն աշխատեցնել փորող մեքենաները:

Առաջին փորձը հաջողվեց վեց տաշտակներով: Կոնվեյերի 15 մետրը մենք տեղափոխեցինք 40 վայրկյանում: Հետևյալ անգամ մենք փորձ արինք 60 մետր տաշտակների վրա, այսինքն մի ամբողջ հանքախորշում: Յերկրորդ փորձի ժամանակ մեզ մոտ ստացվեց մի փոքր

անկանոնութիւնս: Հպիչները պոկվում եյին, մեքենան չեր գնում զանդաղ ընթացքով: այլ շարժվում եր արագ ընթացքով: Կոնվեյերը 60 մետր տեղափոխելու համար ծախսվեց 5 րոպե 27 վայրկյան: Բայց յերրորդ փորձի ժամանակ, յերբ մենք նախապես վերացրինք յերկրորդ փորձի ժամանակ հայտնաբերված պակասութիւնները, տեղափոխութիւնը կատարվեց 1 րոպե 2 վայրկյանուած: Այս կատարելագործութիւնը հնարավորութիւն տվեց Կոնվենկոյի հանքահորի № 7 և 42 զանգվածներին աշխատել աւելցնելու: Նրանք գերակատարում են իրենց առաջադրութիւնները: Մենք խնդրում ենք, վոր մեր փորձը, վորը մեծ նշանակութիւն ունի, գործադրվի ամբողջ Դոնբասում: Կոնվենկոյի անվան հանքահորի մասնագետների մի խումբ՝

Վլադիկիև Ս. Ի. Կոչեսով Վ. Ի. Կամոսիւ Ա. Վ. Բալաբանով Ա. Տ.:

Այսպիսով, կատարելով յերրորդ քայլը հանույթի պրոցեսի զանազան մասերի մերձեցման ճանապարհին, հենց դրանով ել նշվում ե հետագա շարժման ուղին: Մրան վերաբերվում են նաև Դոնբասում աշխատող հողանդական ինժեներ Յեյպերի առաջարկած նախագծերը յերկհատիչ փորող մեքենայի մասին, — ուղիղ ընկնող ածխաշերտերի համար և յերկհատիչ մեքենայի մասին, — թեք ընկնող շերտերի համար: Այս նախագծերը վրձնում են ածուխը միաժամանակ կտրելու և ջարդելու խնդիրը: Այժմս այդ պրոցեսսը կազմված ե յերկու մասերից — հանումը կատարվում ե մեքենայով, իսկ ջարդելը ձեռքով: Մրան մասամբ վերաբերում ե նաև ինժեներ Կոլինկովիցկու նախագիծը՝ փորող մեքենային լուսավորման ֆունկցիաներ տալու մասին: Փոքրիկ լամպի փոխարին, վորը հարկավոր ե լինում բռնել ձեռքերով, կամ թե մի կերպ «հարմարեցնել», ըստ վորում նա բնականորեն խանգարում ե աշխատանքներին, ինժեներ Կոլինկովիցկին առաջարկեց փոքրիկ լամպը հարմարեցնել փորող մեքենային: Վերջինս ինքն ե լուսավորում զանգվածը: Զուգուհից կամ պողպատից ձուլված հատուկ արմատուրան — 50 մմանոց յերեք լամպերի համար — ամրացվում ե մեքենայի վերևից: Արմատուրան գազերից անվտանգ ե, նա եժման ե գերմանականից: Նրան կարելի յե պարաստել հենց հանքահորի արհեստանոցում: Վերջապես, սրանց վերաբերում ե նաև փայտե սյուները

(ամբողջման համար) սողպատե սյուներով փոխարինելու առաջադրել: Այս առաջարկը մտցրել են արտասահմանյան ինժեներները, սակայն պողպատե, շարժական սյուների վերաբերյալ միաքը մենք առիթ ենք ունեցել վաղուց լսելու Դոնբասի բանվորներից, մասնավորապես Մալիսմեկյան հանքահորային վարչութիւն «Մարիս» հանքահորում: Զխոսելով արդեն այն մասին, վոր պողպատյա սյուներ շատ ու շատ անգամ ավելի ամուր ե փայտյա սյունից և ավելի հուսալի կերպով ե կանխում վերին զանգվածի նստելը, նա արագացնում ե սյունավորման աշխատանքը և, կրճատելով այդ միջանկյալ ոպերացիան, կրճատում ե փորող մեքենայի յերկու մասերի միջև յեղած տարածութիւնը:

Բայլ առ քայլ կիրառվող մեքենայացումը իսկական հեղափոխութիւն ե մտցնում ածուխի արդյունաբերութիւն մեջ՝ նա թեթևացնում ե ածխահատի ծանր աշխատանքը, հետզհետե փոխարինելով մարդուն ամենագծվար աշխատանքներում: Մարդու փոխարինումը մեքենայով՝ ընդունում ե ավելի ու ավելի տվարտվող տեսք, այն չափով, ինչ չափով վոր այդ մեքենայի կատարած պրոցեսսը զառնում ե անընդհատ, այսինքն ինչ չափով վոր պակասում ե մի մեքենայական ոպերացիայի և մյուսի միջև յեղած տարածութիւնը: Լեռնային կոմբայնը, միացնելով փորող մեքենայի աշխատանքը ջարդողի և զիզողի աշխատանքի հետ, այդպիսով վերացնում ե աշխատանքի բաժանումը հասարակ ու միապեղաղ մասերի, փոխարինում ե մարդու միապղաղ ու ծանր աշխատանքը, նրան թողնելով միայն կառավարելը: Առանձին ոպերացիաները նորից միանում են, բայց արդեն վոչ թե քլունկի և բահի, այլ բարձր տեխնիկայի հիստնքով, վորն ազատագրում ե բանվորին, իսկ բանվորը զառնում ե սոցիալիստական ստեղծագործող և մեքենայի տեր:

Լեռնային կոմբայնը յերազ չե, վոչ ել Ֆանտազիա, այլ մոտակա տարիների պրբրեմ: Լեռնային կոմբայնի առանձին զծերը յերևում են բոլոր դյուտերում և կատարելագործութիւններում, վորոնք ամեն որ հարստացնում են Դոնբասի տեխնիկան: Տեխնիկային տիրապետելը լեռնային կոմբայնի գաղափարի իրականացման զրավականն ե, բայց տեխնիկային տիրապետելն ամենից առաջ նշանակում ե վերջ տալ «անկարգութիւն»: Սա տեղ չունի և չի կարող ունենալ — դա այժմ պարզ ե ամեն մի բանվորի համար: Մեքենայացումը, առաջ-



ճանաբար միացնելով իր առաջին աստիճաններում և հենց իբր թաժանած արտադրական գործողութունները՝ սոցիալիստական աշխատանքի պրոցեսում ավելի յե մերկացնում «անկարգութեան» ոպորտունիստական ու վնասարարական ելուժեցումը:

### ՄԵՌԱՄԸ ԿԵՆԴԱՆՈՒ ԳԵՄ

Կարտաշեր, Կասաուրովը, Ֆիլիմոնովը, Մուխինը, Լիբհարդտը— մենակ չեն: Հազարավոր Կարտաշեներ տեխնիկական հեղափոխութեան դրոշակը տանում են դեպի հանքահորը: Բայց վորքան հեղափոխականանում են ածուխի հանման նոր մեթոդները, այնքան կատարի դիմադրութեան է լինում նրանց կողմից, ով իր ամբողջ պրակտիկայով կապված է հանույթի հին սիստեմի հետ: Վերջինիս պոչից ամենից շատ է բռնել նա, ով նրանով է պահվում: Յեվ դա հասկանալի յե: Մակայն նոր տեխնիկան չի կարելի մտցնել— միայն խոսակցութեանների միջոցով: Առանց պայքարի գործը զլուխ չեր գա: Յեվ այն հույսերը, թե նոր մեթոդները կանցնեն իրենք իրենց, կանհեն զեղհատի պես, կուլ կզնան մի կում ջրով, —այդ հույսերը կարող են տածել միայն բոլոր ռանգի ոպորտունիստները: Պայքարը տեղի յե ունենում և հարկավոր է վճարականութեան ու մարտական կարողութեան, վորպեսզի հաղթանակ տանել: Դիսավոր դերն այստեղ պատկանում է արհմիութեաններին, վորոնք պետք է գլխավորեն մասսաների շարժումը՝ հեղափոխական տեխնիկայի շուրջը մղվող այդ դասակարգային պայքարում:

Մայիսիսական հանքահորային վարչութեան «Մարիա» հանքահորի յերկու հարյուր մետրանոց զանգվածը—մի փոքրիկ ճակատամասն է այդ պայքարի: Այս փոքրիկ ճակատամասում, այնուամենայնիվ, կարելի յե հետևել, թե ինչպես է տարվում պայքարն ամբողջ Դոնբասում: «Մարիա»-յում կան 7-ը մեքենայացված զանգվածներ, վորոնք ունենալով ածուխի թեք գրութեամբ թափվելու դիրք, կարող են ամբողջովին փոխադրվել Կարտաշեի սիստեմին: Մակայն այդ փոխադրութեանը յերկար ձգձգվում եր: Սկսեցին յերկու հայրուր մնարանոցից: Հենց առաջին քայլերից հայտնարեբվեց հին մասնագետների մի վորոշ մասի հատուկ դիմադրութեանը նոր մեթոդներին: Ծածկն սկսեց

նստել, վորովհետև կոնվեյերը տեղափոխելիս չտեղափոխեցին վանդակները: Հանքամասի տեխնիկի ոգնականը, դիտելով զանգվածը, ուշադրութեան չդարձրեց դրավրա և մեկնելով, զեկուցեց, թե ամեն ինչ կարգին է, կարելի յե իբր թե հանքահոր իջեցնել բանվորներին: Իջեցրին: Իրիգադիթ Պրոնինը նկատում է, վոր զանգվածին փլվածք է սպառնում: Նա շտապում է հանքամասի տեխնիկ Բաբենկոյի մոտ և այդ մասին հայտնում ենրան: Ինչ է անում հանքամասի տեխնիկը. փոխանակ անհապաղ միջոցներ ձեռնարկելու, նա «զեկուցում է» տեխնիկավարին, թե Պրոնինը «խուճապ է ստեղծում» և խնդրում է վարչական միջոցներով ներգործել «պանիկյորի» վրա:

Չանգվածը նստում է: Հանքամասի տեխնիկը, հենց նա, վոր առաջ զեկուցում էր «պանիկայի» մասին, չկարողացավ ոխակ անել մեքենաներն ազատելու համար: «Փլվում է կփվի, կանգ կառնի— մեր բախտն է, խոս մահվան գիրկը չենք նետվելու»:

«Պանիկյոր» Պրոնինը ել բախտի չսպասեց: Մի խուճք բանվորների հետ նա մտավ փլուղ զանգվածը, վորտեղ կանգնած էր փորող մեքենան և, ամեն բուգ է յենթարկված լինելով փլուվածքի տակ մնալու վտանգին, ամբարեց մեքենայի կողքին յեղած տարածութեան ծածկը, դնելով վանդակներ: Գասն մետր զանգվածը փլվեց, բայց մեքենան անվտանգ մնաց: Չանգվածը ալպես մնաց մի որ, մինչև վոր ավարիան լիկվիդացիայի յենթարկեցին:

Այս ամբողջ պատմութեան միջ բնորոշը հանդիսանում է այն, վոր հանքահորի կոմիտեն նույնիսկ չգիտեր ավարիայի սպառնալիքի մասին: Չանգվածում վրչ վոք ել չգիտի, թե ով է պրոֆիլիագորը: Ասում են, վոր այդպիսին յեղել է, բայց ով—անհայտ է: Հանքահորի առաջավոր պահակավայրում, հիմնական, առաջնորդող զանգվածում, վորը յերկար ժամանակ տալիս եր հանքահորի ամբողջ հանույթի կեսը, հին մեթոդների կողմնակիցների և հեղափոխական տեխնիկան կրողների միջև յեղած յետուս պայքարում—այս գլխավոր ճակատամասում պայքարը տեղի յե ունենում առանց արհմիութեանական կազմակերպութեան մասնակցութեան: «Մարիա»-յում նոր տեխնիկան իր շարժումն սկսեց այնպես, վոր առաջին շարքերում յեղավ հանքահորի «յետանկյունում» մեկ անկյունը—տնտեսականը: Մնացած յերկու անկյունները յետ մնացին: Իսկ այս նշանակում է, վոր բանվորական մասսան, վորին իրենց յետևից պիտի տանեն

այդ «անկյունները», չունի ղեկավարութիւն: Իր աշխատանքային հերոսութեամբ բրիգադիր Պրոնինը մենակ չե, սակայն տեխնիկայի մասսայորեն տիրապետումը պահանջում է վե՛ջ միայն հերոսութիւն, այլ և այդ հերոսութեան ղեկավարութիւն: Արդյո՞ք իրավացի չե՞ ընկեր Կոսիորը, վորը վոչ այնքան գովասանական կիրպով է ընույթագծում հանքահորի կազմակերպութիւններին:—

«Բանվորները, առաջին հերթին հիմնական կադրերը, պայքարում են արտադրութեան համար, պատրաստ են ամեն ինչ անել, վորպեսզի ածուխ տան մեր յերկրին: Իսկ մեր ստորին կազմակերպութիւնները դեռ ի վիճակի չեն գլխավորելու բանվորական մասսաների ներքեւից աճող ակտիվութիւնը և դա ուղղելու դեպի կուսակցութեան առաջադրած խնդիրների կատարումը:

Հանքահորի դիսցիպլինան ցածր է ամեն տեսակ քննադատութիւնից: Իս արդյունք է դեպի բանվորական մասսաների կազմակերպման գործը յեղած այնպիսի վերաբերմունքի: Չկա հասարակական, պրոլետարական ներգործութիւն գործալքողների վրա: Աճում են աշխատանքի չեմնելու դեպքերը: Միեւնույն բանը—հոսունութեան վերաբերմամբ:

Այսպիսի յերևույթների դեմ պիտի գորահավաքել հանքագործներին հիմնական կադրերին: Յե՛վ հենց այստեղ է, վոր պետք է շատ բան անեն կուսակազմակերպութիւնները: Պետք է բարձրացնել դիսցիպլինան կոմունիստների մեջ, վորովհետեւ կան կուսակցութեան այնպիսի անդամներ, վորոնք աշխատում են առանց թեւերը քշտելու:

Կոմունիստը պետք է որինակ լինի, մասսաների մարտական կազմակերպիչը լինի: Պետք է ավելի մեծ ստիճանի բարձրացնել սոցմրցութեան և հարվածայնութեան գործը, քանի վոր առանց սոցմրցութեան և առանց հարվածային բրիգադներ կազմակերպելու մենք չենք կարող արագութեամբ առաջ շարժվել:

Յուրաքանչյուր «անկարգութեան» որինակով պետք է մասսաներին պարզաբանել մեքենայացման իմաստն ու նշունակութիւնը, վորպեսզի այդպիսով կազմակերպել նրանց՝ տեխնիկական աշխատանքի սոցիալիստական կազմակերպութեան հետ ներդաշնակելու միջոցով մեխանիզմներին տիրապետելու:

պայքարի համար: Այժմ Իոնբասում կազմակերպվում են հանքահոր—ԲՏՈՒՀ-ներ (բարձրագույն տեխնիկական ուսումնական հաստատութիւններ): Այդ ԲՏՈՒՀ-ներում ուսուցումը միայն այն դեպքում կլինի արդյունավետ, յեթե հանքահորերի կազմակերպութեան ներքեւից առաջ արհմիութենական կազմակերպութիւնները—թե որեւիտեան ուսուցումը կապեն պրակտիկայի հետ: Իսկ այդ պրակտիկան կայանում է վոչ միայն մեքենայի մոտ կատարվող աշխատանքում, այլ և «անկարգութիւնները» մասսայորեն հաղթահարելու մեջ: Իսկ «անկարգութիւնները» մասսայական հաղթահարումը արտադրական պրոցեսը նոր, հեղափոխական մեթոդներով, կանոնավորապես կարգավորելու մյուս կողմն է, կարգավորում, վորն իրագործվում է մեծ հետեւանքներով հղի ամենաչնչին անհարթութիւնները կանխելու միջոցով:

Բայց արդյո՞ք կարելի՞ յե կանխել ավարիաները, առանց վերահասուցելու արտադրական խորհրդակցութիւնները, առանց սոցիալիստական մրցութեան, առանց լայնորեն պարզաբանելու «անկարգութեան» վնասարարական բնույթը, առանց մասսաների մասնակցութեան՝ նոր մեթոդների ամենորոյա կատարելագործման, — վորոնք իրենց համար ճանապարհ են հարթում հնի և նորի միջև մղվող պայքարում, — ստեղծագործական մտքի խիզախ թռիչքի և արդեն նեխված կապիտալիստական տրադիցիաների միջև յեղած ամենորոյա ընդհարումներին: Մեքենայացված դանդաղ գործի գցելու շրջանում արտադրական խորհրդակցութեան կարևորագույն խնդիրը դառնում է հենց «անկարգութեան» մերկացումը, ավարիայի կանխումը: Այդ ժամանակաշրջանում, մեքենայացված դանդաղ մի աշխատանքի առաջին որերում ու տասնորյակներում արտադրական խորհրդակցութիւնների փորձի փոխանակութիւն դժբախտաբար չկա ամբողջ Իոնբասում: Հայտնի յե մեքենայացված լավաների փորձը, սակայն գործի գցելու, առաջին դժվարութիւնների, առաջին քայլերի փորձը անհայտ է, թեև նա ամենից շատ է հարկավոր արտադրութեան գիտութեան բոլոր հիմունքները հեղափոխականացնող Իոնբասին:

# ՍՏԻՊԵՆԲ ՄԵՔԵՆԱՅԻՆ ԾԱՌԱՅԷԼ ԱՆԴԱԴԱՐ

Հին և նոր տեխնիկայի միջև պայքարը շարունակվում է: Նոր տեխնիկայի հաղթանակի ապացույց կարող է ծառայել յուրտարարուչյան աճումը Դոնըրսի մասնազետ բանվորների միջև: Առավել կարևոր դյուրտարարական առաջարկների մասին մենք խոսում ենք: Սակայն շարժումն ընթանում է այնքան արագ, վոր ուղղակի քմեն սր նոր ապացույցներ է բերում շախտյորների ստեղծագործական մտքի նոր հաջողությունների մասին: Մասսաների գյուտարարական նախաձեռնությունը բնղմնավորված է աշխատանքի սոցիալիստական կազմակերպությունում, նոր տեխնիկայի հետ ներդաշնակված: Մեխանիզմի առաջին հաղթանակներից մեկը, յեշբ նրան իջեցրին հանքահորը,—այդ այն եր, վոր նա պայծառ լուսավորեց յուրաքանչյուր արտադրական գործողությունն առանձին. արտադրության պրոցեսը բաժանվեց մասերի և յուրաքանչյուր մասը, իսկ դրանից հետո նաև այդ մասերի կառը,—գարձավ բոլորովին պարզ: Տեխնիկան կարծես թե ասում է.. «տեսնում ես, իմ շնորհիվ գործը վորքան հասարակ դառավ: Միայն հետաքրքրվիր, միայն ուսումնասիրիր, միայն ձեռք զարկ ինձ և իմ ոգնությունը դու կկարողանաս ավելի նոր ձևով վերակառուցել հանքահորը»: Տեխնիկան պարզացրեց աշխատանքը, բայց միևնույն ժամանակ բանվորների առաջ խնդիր դրեց՝ նորից միացնել պրոցեսի առաջին մասերը, կապել նրանց վոչ թե սահնակավարի թոկով, այլ կոնվեյերի ժապավենով:

Առաջին հայացքից կարող է այնպես թվալ, վոր հիմա արդեն վերջ է լինում բոլոր կվալիֆիկացիաներին, Ածխանստ: Ինչո՞ւ համար: Միայն մեքենավար և սևազորձ բանվորներենրին տեղափոխել են ավուխ դիրեկուն: Ձխոսելով արդեն այն մասին, վոր դա հարվածում է ձեռքով ավուխ հանելուն,—իսկ ձեռքով հանուլթն առայժմ պակաս դեր չի խաղում, նրան չի կարելի մի հարվածով վերջ տար,—չխոսելով արդեն այդ մասին, այդպիսի հայացքը սխալ է նաև մեքենայացման տեսակետից: Մեքենայացումը բոլորովին չի նշանակում, թե մեքենան պահանջում է միայն մի քանի տասնյակ մեքենավարներ, իսկ մնացածներն արդեն սովորելու վոչինչ չունեն: Մեքենայացման սոցիալիստական կիրառումը պահանջում է զլխովին ու բազ-

մակողմանի տեխնիկական գրագիտություն: Բայց միևնույն ժամանակ մեքենայացումը բանվորներից պահանջում է բարձր մասնագիտություններ, պահանջում է ավելի ևս կատարելագործվել իրենց մասնագիտությունը: Իրա ճանապարհը, բացի տեխնիկական ուսուցումից, նաև զույգ-զույգ մարդկանցով աշխատանքն է: Զույգ-զույգ աշխատանքը փորող մեքենաների վրա՝ ապահովում է լավագույն հոգատարությունը մեքենայի մասին: Զե վոր մենք կառուցում ենք վոչ թե ամպերի վրա, այլ յերկրի (նաև գետնի տակ), կառուցում ենք այն մարդկանց հետ, վորոնք ծնվել են հին հողի վրա,—կենդանի մարդկանց հետ: Դեպի մեքենան սոցիալիստական վերաբերմունքի դաստիարակությունը պետք է լինի վոչ թե բառացի դաստիարակությունը,—այդպես կարող են մտածել միայն վոչնչի վրա չհիմնվող ուսուսիստները,—այլ պետք է իր մեջ ներդաշնակե հասարակական ներգործման բոլոր մեթոդները,—համոզում, որինակ, առավելությունների ցուցադրում, վորոնք տալիս է լավագույնը: Զույգ-զույգ աշխատանքը, բացի իր այդ ուղղակի կոչումից, կատարում է մեխանիզմին տիրապետելու ամենաուժեղ ազդակի դեր: Փորող մեքենայի ամրացումը մեքենավարների վորոշ խմբակին՝ կստիպի նրանց ուսումնասիրել իրենց մեքենան այնպես, ինչպես հրացանաձիգը պիտի ուսումնասիրի իր հրացանը, յեթե նա ուզում է դառնալ լավ նշանաձիգ: Փորող մեքենայի վրա զույգ-զույգ աշխատանքի և վագոնի վրա նույնպիսի աշխատանքի միտքը առաջին անգամ ծագեց «Վետկա» հանքահորի մեքենավարների մեջ: Այս միտքը սկսում է թափանցել ավստրալիաների լայն մասսաների գիտակցության մեջ: Արհմիությունական կազմակերպությունները պետք է ուսումնասիրեն զույգ-զույգ աշխատանքների փորձը, վորը հաջողությամբ գործադրվում է տրանսպորտում և այն տեղափոխեն բոլոր հանքահորերը:

Լավագույն հանքահորերի փորձը ցույց է տալիս, թե փորող մեքենան կարելի յե ոգտագործել ավելի լավ, քան այդ մեծ մասամբ ոգտագործվում է: Առաջին յեռամայակի ընթացքում ամբողջ Դոնըսում փորող մեքենայի արտադրողականությունը կազմում էր ամսական 2021 տոնն աճուխ: Հատուկ յեռամայակի հետ համեմատած՝ մեքենայի արտադրողականությունը բարձրացավ ընդամենը 5,4 տոկոսով: Միևնույն ժամանակ ավստրալիաների առաջավոր բրիգադներն արդեն գործ-

նականում ապացուցեցին, վոր մեքենան կարող ե տալ յերկու-  
 յերեք անգամ ավելի: Բուդյոննու № 12—18 հանքահորի  
 վեցերորդ արևելյան զանգվածում ընկ. Խասյչենկոյի բրիգադան  
 հաջողեցրեց ծանր ածխահատ մեքենայի ոսկորդային արտա-  
 դրողականութուն—ամսական 7, 5 հազար տոնն: Կադիևսկու  
 հանքային վարչության «Ատաման» կոչված հանքաշերտում  
 փորող մեքենան ամսական տվեց 6,715 տոնն: Դոլուբովսկի  
 հանքահորը րում փորող մեքենայի արտադրողականութունն  
 անցել ե 5 հազար տոննից:

Մեխանիզմներին տիրապետելու աստիճանը վերջին հաշ-  
 վով չափվում ե նրանց արդյունավետությամբ: Ձե վոր մենք  
 վոչ թե հենց այնպես, ուզում ենք նվաճել մեքենան, չե վոր  
 մենք այս դեպքում հետապնդում ենք դասակարգային-քա-  
 ղաքական վորոշ նպատակ—տալ ավելի շատ արտադրանք,  
 վորպեսզի ավելի ամուր հաստատվել սոցիալիստական դիրքե-  
 բում: «Կամ մահ, կամ հասնել և անցնել»:

Փոխ առնելով առաջավոր բանվորների փորձը, վորոնք  
 կարողացել են հաղթել կապիտալիստական տեխնիկան, կար-  
 զացել են նրան յերեսով դարձնել դեպի իրենց, կարողացել են  
 աճեցնել նոր տեխնիկան այն հողի վրա, վորը հարստացել ե  
 աշխատանքի սոցիալիստական կազմակերպությամբ,—Դոնբասի  
 շախտյորները կկարողանան հաղթել հին, մեռած տեխնիկայ  
 և նրան փոխարինել իսկական հեղափոխական տեխնիկայով, մե  
 տեխնիկա, վորի մեջ գտնվում են մշտական կատարելագործու-  
 թյան, անընդհատ առաջ շարժվելու հիմունքները, մի տեխ-  
 նիկա, վորը հանդիսանում ե պրոլետարիատի իսկական  
 դուստրը:

**ԱՏԵՂԵԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՆԵՐԳԻԱՅԻ  
 ԱՆՍՊԱՌ ԱՂԲՅՈՒՐԸ**

Տնտեսության սոցիալիստական կազմակերպումը մեզ  
 բարձրացնում ե արտադրական ույժերի զարգացման բարձրա-  
 դույն աստիճանի վրա: Պլանային տնտեսավարությունը, վորն  
 իր թափով բացառիկորեն լայն և գիտական ներդաշնակու-  
 թյամբ խոր արտահայտության ե գտել հնգամյակում, ամբողջ

աշխարհի առաջ պարզորոշ կերպով ցուցադրում ե իր առավե-  
 յությունները կապիտալիստական «ազատ ուժերի խաղի» հան-  
 դեպ: Պլանային տնտեսությունը մատչելի յե միայն մեզ, ուս-  
 տի և տեխնիկան ել իր ամբողջ հեղափոխական եյությամբ  
 միայն մեզ ե պատկանում: Պլանային տնտեսությունը բաց ե  
 անում արտադրական ույժերի զարգացման նոր աղբյուրներ և  
 զա թույլ ե տվել մեր յերկրի բանվոր դասակարգին առաջա-  
 գրել հանդիպական արդեֆինպլան. պրոլետարներն իրենք են  
 դատել այդ աղբյուրները: Հանդիպական պլաններն առաջադր-  
 վել են յուրաքանչյուր ձեռնարկության մեջ, սովխոզներում  
 և կոլխոզներում, վորպեսզի հետո ձուլվեն և կազմեն մի ընդհանուր,  
 գլխի խարի հանդիպական պլան,—5-ամյակը—4 տարում կատա-  
 բելու: «Բոլշեիկական զառանցանք»—այսպես արժեքավորեց հըն-  
 գամյակը կապիտալիստական աշխարհը: «Ուտոպիա»—ձայնակ-  
 ցում եյին Կոնգրատները: Ձենք դիմանա—աղաղակում եյին  
 սպորտունիստները: Հինգ տարում—ասաց խորհրդային յերկրի  
 կառավարությունը: Չարս տարում—պատասխանեցին միլիոնա-  
 վոր աշխատավորներ: Յեքեք տարում—ուղղեցին Դոնբասի  
 հանքագործները: Յեքու և կես տարում—կատարեցին նավ-  
 թագործները, ենուղեխաղմը ներդաշնակելով ամերիկական  
 տեխնիկայի հետ:

Միայն աշխատանքի սոցիալիստական կազմակերպումն ե  
 թույլ տալիս աշխատավորներին իսկապես վոր տիրապետել  
 մեքենային, այն ժամանակ, յերբ կապիտալիզմի որոք մեքե-  
 նան տիրապետում ե մարդուն: Աշխատանքի սոցիալիստական  
 կազմակերպումը ազատագրում ե աշխատանքը, ինչպես մենք  
 այդ տեսնում ենք իններորդ գլխում, լցնում ե նրա մեջ ներ-  
 քին բովանդակություն և, հետևաբար, թեթևացնում ե նրան:  
 Ամբողջ ստրկական աշխատանքը ծանր ե վոչ միայն իր ուղ-  
 զակի հոգնաբերությամբ, այլ և իր կալամ ընույթով: Մեքե  
 կարելի յե համեմատել կապիտալիստական ստրկի կամայից  
 աշխատանքը—յերբ այդ ստրուկն իր մեջը ծոռում ե կապի-  
 տարի հարստացման համար—խորհրդային յերկրի պրոլե-  
 տարի աշխատանքի հետ, վորը ներշնչված ե համաշխարհային  
 պատմական նշանակություն ունեցող խնդիրների լուծմամբ և  
 հասկանում ե այն սերտ կապը, վոր գոյություն ունի իր ցեխի  
 արդեֆինպլանի կատարման ընթացքի և համաշխարհային հե-  
 զափոխության ընթացքի միջև:

Ազատ աշխատանքը վոչ միայն ազատագրում է մարդուն մեքենային յենթարկվելուց, այլ ուղղակի և անմիջականորեն կրճատում է բանվորական որը և պահասեցնում է բանվորի ֆիզիքական ու ջղային եներդիայի ծախսումը: Բավական է մասնանշել յոթժամյա բանվորական որը: 1930 թվականի հոկտեմբերին ԽՍՀՄ բանվորների 43 տոկոսն աշխատում էր յոթական ժամ. 1931 թվականին խոշոր արդյունաբերությունում յոթական վերջում խորհրդային պրոլետարի բանվորական որը միջին թվով հավասարվում էր յոթը ժամ ջրան ըսան ըոպեյի, այն ժամանակ, յերբ կապիտալիստական յերկրներում նա կազմում էր ութից մինչև տասներկու ժամ:

Բանվորական որվա տևողություն կրճատումը մինչև յոթը ժամ—այդ դեռ ևս վերջին կրճատումը չէ: Մեր առաջ է վեց ժամյա բանվորական որը: Արդյոք այդ հնարավոր է կապիտալիզմի որոք: Այս հարցը տվեք մի վորևե բանվորի և նա կկարողանա ապացուցել, վոր կապիտալիզմի համար այդ հնարավոր չէ:

Հնգօրյակը, բացի իր տնտեսական եֆֆեկտից, հսկայական նշանակություն ունի բանվորի համար՝ աշխատանքը թեթևացնելու իմաստով: Թեև տարվա ընթացքում բանվորական ժամերի ընդհանուր քանակությունը մնաց համարյա անփոփոխ, բայց հենց միայն հանգստի որերի ճիշտ հաջորդականությունը է բանվորական շաբաթի կրճատումը շատ և շատ պահասեցնում են որդանիզմի բեռնվածությունը: Հիշեցեք, թե բանվոր դասակարգի «ձախ» և աջ պաշտպաններն ինչպիսի կատաղությունք էյին հարձակվում յոթժամյա բանվորական որվա և հնգօրյակի վրա: Ինչպես և ինչ ելվոր չասեյին, բոլորն իբր թե պրոլետարիատի ռշահերի համար էրք:

Զարգացման վիթխարի ու չտեսնված հնարավորությունները, վոր աշխատանքի սոցիալիստական կազմակերպությունը տրամադրում է մեր արդյունաբերությունում, յոթժամյա բանվորական որվա և անընդհատի հետ միացված, — թուռլ տվին մեզ արդեն հնգամյակի յերկրորդ տարում վերջ տալ գործադրկություն: Գործադրկությունն արտադրություն կապիտալիստական ձևի անպայման ուղեկիցն է: Կապիտալիզմը նրա վրա յն պահվում: Գործադրկությունը լիակատար իրավունքով հարող է կոչվել կապիտալիզմին կերակրող: Աշխատանքի

կապիտալիստական բաժանման յերեսուն հինգ միլիոն զոհերը հանձնված են սովորաբայի իշխանություն և վոչ մի ուրիշ արքա, վոչ մի թագավոր, վոչ մի պրեզիդենտ չի ցանկանում, — ինչպես սովորաբար լինում է և ուրիշ դեպքերում, — սովորաբայից յսել նրա հպատակներին:

Կապիտալիզմի ստրուկները հույսով, սիրով ու հաղթանակի վստահությամբ նայում են Խորհրդային Միության պրոլետարների վրա, վորոնք ազատ են աշխատում, չեն տառապում գործադրկությունից, ստեղծագործական ուժեղ խանդավառությամբ նվաճում են մինչև այժմ չնվաճված մեքենան, ողբտովում են ազատ աշխատանքի հիմնական բարիքով — կրճատվողական որով և կրճատ բանվորական շաբաթով: Իսկ այդ բարիքը, վորը բղխում է աշխատանքի սոցիալիստական կազմակերպությունից իր հերթին նպաստում է նվաճելու սոցիալիստական մեծագույն իդեալներից մեկի նվաճման: Նա նպաստում է մտավոր ու ֆիզիքական աշխատանքի միջև յերկարատև հակադրության վոչնչացման, մի հակադրություն, վորը հատուկ է ամեն մի շահագործողական հասարակություն, վորը ստեղծանախակված է բնություն վրա ունեցած իր իշխանություն մեջ:

1931 թվականին մեր յերկրում յուրաքանչյուր յերեք մարդուց մեկը սովորում է նույն թվականին լայնորեն ծավալվում են գործարան — ԲՏՈՒՀները (բարձրագույն տեխնիկական ուսումնական հաստատությունները), մտավոր ու ֆիզիքական աշխատանքի սոցիալիստական ներդաշնակման այդ առաջին օջախները: Գործարան — ԲՏՈՒՀ-ը, հանքահոր — ԲՏՈՒՀ-ը և սովետոգ — ԲՏՈՒՀ-ը ստեղծում են մարդկանց նոր տիպ, սոցիալիստական տեխնիկայի նոր ստեղծողների կաղերք:

Արտադրական ույժերի հզոր վերելքն ապահովեց ԽՍՀՄ աշխատավորների բարեկեցությունում աճումը: Բավական է այստեղ բերել մի ընդհանուր տեղեկանք. — այժմ ԽՍՀՄ բանվորի տեղ ևս աշխատավարձը նախապատերազմյանից բարձր է 67 տոկոսով: Այստեղ չեն մտնում այնպիսի տարրերն, ինչպիսին են՝ էնակլիստարությունը, առողջապահությունը, մայրություն և բնակիչության պահպանությունը, ձրի ուսումը, հանգստի որերը, գործադրկության լիվիդացիայի կապակցությունք ընտանիքի գոյատևելի ավելացումը, հասարակական սնունդը և այլն: Իսկ վոր այս բոլորը նշանակում է սպառման լայնացում և այս չե վոր այս բոլորը նշանակում է սպառման լայնացում և այս ամենը ձեռք և բերված այն միջոցներով, վորոնք ստացվել են

արտադրութեան սոցիալ տիտական կազմակերպման հիման վրա արտադրական ուժերի զարգացման հետեանքով:

Միլիոնների մասսայական ուսուցումը, գործարան-ԲՏՈՒՆ-ները, բանվորական ժամերի կրճատումն ու բարեկեցութեան աճումը—այս բոլորն արտադրութեան սոցիալիստական մեթոդների պտուղներն են, վորոնք (մեթոդները) յեկան փոխարինելու կապիտալիստական մեթոդներին:

Կարիք կա՞ դարձանալու, վոր կամավոր դիտցիպլինան, վոր կազմում է սոցիալիստական աշխատանքի հիմքը, ամեն սր թափանցում է նորանոր տասնյակ հազարավոր բանվորների ու կոլտոզնիկների գիտակցութեան մեջ: Կոմունիստական որինակի (շաբաթօրյակներ) ուժով դարձավ հասարակական ներգործման հսկայական ուժ, դարձավ միլիոնների առօրյան, վորոնք գործնականում համոզվում են արտադրութեան սոցիալիստական կազմակերպման առավելութունների մեջ:

Աշխատանքի թեթևացումը, բանվորական կրճատ ոքր, հնգորյակը, գործազրկութեան վերացումն ու բարեկեցութեան աճումը միլիոնավոր աշխատավորների միջավայրում ազատում են մարդկային յեռանդի անսպառ պաշարներ: Մասսայական ուսուցումն այդ եներդիան ծառայեցնում է ստեղծագործական, մտավոր ընդունակութունների զարգացմանը: Աշխատանքի գիտակցական դիտցիպլինան, վորն արտահայտվում է սոցիալիստական մրցութեամբ, ցույց է տալիս աշխատավորի աճող ստեղծագործական հնարավորութունները գործադրելու ճանապարհը: Արտադրութեան բարելավման ասպարիզում բանվորական նախաձեռնութեան աճումը, մասնավորապես գյուտարարութեան աճումը—ահա ամենամասխալ ցուցանիշներից մեկն այն բանի, թե ինչ արդյունքներ է տալիս մտավոր ու ֆիզիքական աշխատանքների միջև յեղած հակասութունների վերացումը,—հակասութուններ, վորոնց տեղը հանդես է զալիս ֆիզիքական ու մտավոր աշխատանքի հեղափոխական ներգաշնակութունը:

### ԲԱՆՎՈՐԻ ՍՏԵՂԵԱԳՈՐԾԱԿԱՆ ԴԱՐՑՔԷ

Մեր մամուլը զետեղել է գյուտարարութեան մասսայական կազմակերպման որինակներ: Կավազույն փորձերից մեկը պետք է համարել Լիսիչանսկու (Դոնբասս) «բուլեիկյան զրոն» ռայո-

նական լրագրի փորձը: Լիսիչանսկու ռայոնում «սոցիալիստական պատվեր» ավին բանվորներին՝ հատուկ հրահանգի համաձայն գյուտարարութեան անելու համար: «Դոնսոդա» գործարանի համար մշակվեց 124 կետերից բաղկացած հրահանգ: Բանի համար մշակվեց 124 կետերից բաղկացած հրահանգ: Զամագատասիան հրահանգներ մշակվեցին Լիսիչանսկու ռայոնի հանքահորերի համար: «Դոնսոդա»-ի հրահանգը բաժանված է բոլոր բանվորներին: Դա բառիս իսկական իմաստով սոդայի է բոլոր բանվորներին: Դա բառիս տեխնիկային մասսայորեն տիրապետելու ծրարտադրութեան տեխնիկային մասսայորեն տիրապետելու ծրարագիրն է: Այսպիսով յուրաքանչյուր բանվորի տրված է յուրաքանչյուր սոցիալիստական խնդիրների ժողովածու տեխնիկայի մասին: Յուրաքանչյուր վճռված խնդիր գործարանին մոտեցնում է տվյալ մակարդակի վրա հնարավոր տեխնիկայի լիանում կատար տիրապետութեան: 124 հիմնական գյուտարարական առաջադրութունները (պլյուս հարյուրավոր յերկրորդականները) կատարվում են բանվորների կողմից և գործարանային վարչութեան կողմից կենսագործվում են ամենակարճ ժամանակամիջոցում (առաջարկները քննութեան համար 5 օր է տրվում): Գյուտարարների տրվող սոցիալիստական պատվերը յուրաքանչյուր բանվորի դարձնում է գյուտարար: Իսկ զա իրակաքանչյուր բանվորի դարձնում է գյուտարար: Իսկ զա իրակաքանցվում է նրանով, վոր յուրաքանչյուր բանվորի պարզ կերպով ցույց են տրվում գործարանի բոլոր տեխնիկապես թույլ կողմերը:

Սոցիալիստական պատվերը լեոնային կոմբայնի վերաբերյալ— այսինքն մի մեքենայի, վորը միաժամանակ հատում, մանրում և կոնվեյերի վրա յե ցնում ածուխը,—վոր հայտարարված է ածխարդյունաբերութեան բանվորների կենտրոնաքանցում: Մայիսիկյան հանքահորային վարչութեան մեջ այս սում: Մայիսիկյան հանքատում են մի խումբ գյուտարարներ: Դոնբասի մյուս հանքահորերում այդ նույն գաղափարի համար աշխատում են մի խումբ բանվորներ և մասնագետներ:

Լեոնային կոմբայնի գաղափարի իրականացումը մատչելի յե դառնում Դոնբասի բանվորի կոլեկտիվ, ստեղծագործական մտքին հենց այն պատճառով, վոր ածխահանման մեքենայացումը, վոր կատարվում է սոցիալիստական մեթոդներով, անխուսափելիորեն պիտի առաջ բերի յուրաքանչյուր բանվորի մեջ ձգտում—հասկանալ արտադրութեան ամբողջ պրոցեսը: Ավելին, նա թե ստիպում է բանվորին հասկանալ արտադրու-

թյան ամբողջ պրոցեսը և թե նրան հնարավորութուն է տա-  
լիս այդ հասկանալու և իսկ կապիտալիստական պայմաններում  
մեքենայացման գաղտնիքը բանվորին անմատչելի չէ: Այստե-  
ղից ել բղխում է սոցիալիստական պատվերի հաջողութունը,  
վորը մի հրաշալի միջոց է մասսայական բանվորական նախա-  
ձեռնութունը տեխնիկայի նվաճման հունի մեջ առնելու հա-  
մար:

Գյուտարարներին տրվող սոցիալիստական պատվերն ա-  
ռաջ յեկավ սոցիալիստական մրցութունից: Դա նրա ձևերից  
մեկն է: Պատվերը, վոր հասցեյազրվում է գյուտարարներին  
չնորհիվ սոցիալիստական մրցության, դառնում է բոլոր բան-  
վորներին հասցեյազրված մի պատվեր: Մասսաների ստեղծա-  
գործական նախաձեռնութունը ուղղվում է դեպի տեխնիկայի  
տիրապետութունը: Իսկ յերբ տեխնիկային տիրապետում են  
վոչ թե անհատներն, ինչպես այդ կատարվում է կապիտալիս-  
տական հասարակության մեջ, այլ մասսաները, այն ժամանակ  
միայն մարդը կարող է իսկապես և լիակատար չափով նվաճել  
տեխնիկան: Միայն պրոլետարիատը, վոր սոցիալիստորեն է  
կազմակերպում աշխատանքը, ընդունակ է լիովին տիրապետել  
տեխնիկային: Յուրաքանչյուր բանվոր պետք է դիտենա է  
զրավի իր տեղը ազատ աշխատանքի բանակի շարքերում, վորը  
ծավալված հարձակման է անցել համաշխարհային տեխնիկայի  
ամբողջների դեմ:

Ըստ ժողտնտեսության Գերագույն Խորհրդի տվյալների,  
1929-30 թվականին բանվորական առաջարկների թիվը, հա-  
մեմատած 1928-29 թ. հետ, 2-3 անգամ ավելացել է: Այսպես,  
մանածագործական արդյունաբերության մեջ 1928-29 թվակա-  
նին մտցվել է 12 հազար առաջարկ, իսկ 1929-30 թվականին—  
25 հազար: «Ստալ-ի ձեռնարկություններում—8 և 12 հազար,  
Ռետինոմիթավորման մեջ—1200 և 9.100 առաջարկ և այլն:

Բանվորական հսկայական ակտիվություն հայտնաբեր-  
վեց հատուկ յեռամսյակում: Որինակ, «Կրասնի բազատիրչ-  
ում, 1930 թվականի 4-րդ յեռամսյակում մտցվել է 196 բան-  
վորական առաջարկ, իսկ հատուկ յեռամսյակում—187: «Դինտ-  
մո» գործարանում—193 և 559. Նարո- Փոմինսկի մանուֆակ-  
տուրայում—62 և 2672 և այլն:

Այս թվերն ասում են՝ այս, տեխնիկան մեղ է պատկա-  
նում:

### ԻՆՉՊԵՍ ՂԵԿԱՎԱՐԵԼ ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային իրավակարգը տալիս է բոլոր ղեպ, իրական  
պայմանները նրա համար, վորպեսզի բանվորական ամենա-  
լայն մասսաները կարողանան տիրապետել տեխնիկային: Այն  
չափով, ինչ չափով վոր լայն մասսաները տիրապետում են  
արտադրության գիտության, նրանք սկսում են ակտիվորեն խա-  
ռնվել այդ դիտության հարցերին, մտցնելով իրենց առաջարկ-  
ները, ուղղումներն ու բարելավումները: Այդ միջամտությունը  
լինում է արտադրական խորհրդակցությունների, գյուտարար-  
ական բրիգադների, ոացիոնալացման որգանների միջոցով: Ար-  
գեն տեխնիկայի իսկական բուշեիկյան նվաճման առաջին քայ-  
լերը տալիս են հսկայական արդյունքներ: Այդ յերևում է  
նավթագործների որինակից, վորոնք, յուրացնելով արտադրու-  
թյան բուշեիկյան թվաբանության միայն սկզբնական կանոն-  
ները, արգեն կարողացան բուշեիկորեն հինգը բաժանել յեր-  
կուսի վրա, վորպեսզի ստացվի հինգ: Այս թվաբանության  
հատկություններն այնպես են, վոր նա հենց սկզբից թույլ է  
տալիս կատարել ամենաանսպասելի և կապիտալիզմի տեսակե-  
տից անկարելի՝ ուշժերի գումարում, կորուստների հանում,  
ժամկետերի բաժանում և տեմպերի բազմապատկում:

Բանվորական նախաձեռնության աճման տեմպերը,—վորն  
ուղղված է դեպի արտադրության բարելավումը,—ավելանում  
են և պետք է ավելանան առավելարագ: Յեթե վերջին տարուձ  
բանվորական առաջարկների քանակությունն ավելացավ 2—3  
անգամ, ապա այս տարի դա կավելանա ավելի ևս շատ անգամ:  
Իսկ այս նշանակում է, վոր արտադրական խորհրդակցություն-  
ները, իսկ նրանցից հետո նաև բանվորական գյուտարարական  
բրիգադները և տնտեսական ու ոացիոնալացման որգանները—  
բրիգադները և տնտեսական ու ոացիոնալացման որգանները—  
պետք է այնքան արագացնեն իրենց տեմպերը, վորպեսզի հաս-  
պետք է այնքան արագացնեն իրենց տեմպերը, վորպեսզի հաս-  
նեն բանվորական ակտիվության այդ ալիքին և լինեն վոչ թե  
չարժման պոչում, այլ նրա գլուխն անցնեն: Այդպիսի յետամ-  
նացության վտանգներ կան: ԽՍՀՄ ԺՏԳՆ-ի կատարման ստուգ-  
ման սեկտորը հետազոտել է գյուտարարությունների ոգտա-  
գործումը ձեռնարկություններում: Հայտնաբերված են աղաղա-  
կող թերություններ, վորոնք հետևանք են դեպի բանվորական  
առաջարկներն յեղած զգվելի, բյուրոկրատական վերաբերմուն-  
քի:

Վորպես ընդհանուր յերևույթ, բոլոր հետազոտված ձեռնարկությունների բանվորական գյուղատարարական բրիգադներում մասնագետ ինժեներներ և տնտեսագետներ չկան: Այդ բրիգադներում հաստիքները (շտատները) թույլ են: Նեվսկի գործարանում, վորտեղ աշխատում է 9 հազար բանվոր, գյուղատարարական բրիգադը բաղկացած է 4 մարդուց: Կոչլուգինսկի գործարանում — 3 մարդուց, Միտիչչիի — 2, վորոնցից մեկը գործավար է: Որեխովո-Չուլսկի կոմբինատի վարչության մեջ բանվորական գյուղատարարական բրիգադա բոլորովին չի յեղեր:

Չարմանալի չէ, վոր բանվ. գյուղ. բրիգադների այդպիսի կազմակերպման պայմաններում, Իժորսկու գործարանում 1930 թվի փետրվարին մտցված 3,721 բանվորական առաջարկները սկսեցին մշակվել միայն դեկտեմբերին: Նևսկու գործարանում 2,245 բանվորական առաջարկներ մեկ տարվա ընթացքում թողնված են յեղել յերեսի վրա:

Փորձնական արհեստանոցներ չկան համարյա վոչ մի ձեռնարկության մեջ: 1931 թվականի համար գործարանների օտուդիչ թվերում նրանք նույնիսկ չեն նախատեսված:

Հավանություն գտած և ընդունված բանվորական առաջարկները չեն իրականացվում: Պողոսկու գործարանում 1930 թվականին ընդունված 1,270 առաջարկներից արտադրության մեջ կիրառվում է միայն 40 տոկոսը: Միտիչչիի գործարանում ընդունված բանվորական առաջարկների միայն 30 տոկոսն է իրականացված: Այսպիսով տարիներով թթու յեն գրվում ամենաարժեքավոր գյուղատարար: Պողոսկու գործարանում ընկ. Լայների առաջարկը, վորը տարեկան տալու յե կես միլիոն խնայողություն, 1927 թվականից անշարժ է մնացել: Այդ նույն գործարանում մեկ ու կես տարի ընկած է ընկ. Կուրբատկինի առաջարկը, վորը պատենտավորված է արտասահմանում: «Քնեցրած» առաջարկների այս ցուցակն իհարկե շատ հեռու յե լրիվ լինելուց:

Մի շարք գործարաններ բանվորական առաջարկների պարզևատրման իրենց քաղաքականությամբ միայն վարկաբեկում են այս գաղափարը: Իժորսկու գործարանում վճարված պրեմիաների 66 տոկոսը կազմում են 3—5 ուրբու գումարներ: Նույն գործարանում այն բանվորին, վորը 6 առաջարկություն է մտցրել, տվել են ...3 ուրբլի պրեմիա:

Այս հետազոտությամբ հայտնաբերված փաստերը մեղա-

դրական ակտ են հանդիսանում հետազոտված ձեռնարկությունների արհիտեթնական կազմակերպությունների դեմ: Վորքան շատ է աճում բանվորների արտադրական ակտիվությունն, քան շատ է աճում բանվորների արտադրական ակտիվությունն, միութենական կազմակերպությունների համար կատարման մտուզումը: Արտադրական ակտիվության, արտադրական խորատուզումը: Արտադրական ակտիվությանը թույլ է հրդակցությունների ընդհանուր ղեկավարությունը թույլ է Պահանջվում է ամենամեծ կոնկրետություն, ճկունություն է ապերատիվություն: Արդյոք կան առաջարկներ արտադրության տվյալ, ամենից թույլ պրոցեսի բարելավման ճախին: Ինչպիսի առաջարկներ են: Քանի որ է հարկավոր նրանց քննության համար: Ժամկետն անցավ—արդյոք վոր նրանց քննված են նրանք: Ինչ է հարկավոր պետքական առաջարկների իրացման համար: Ինչքան ժամանակ է պահանջվում Արդյոք կատարվում է իրացման նախապատրաստություն: Ժամկետը մոտենում է—արդյոք ժամանակին կիրացվի: Ժամկետն անցավ—ամեն ինչ արված է: Ահա ղեկավարության կոնկրետացման ճանապարհը:

### ՅԵՐԵՍՈՎ ԴԵԴԻ ԱՐՑԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ

Արտադրության կենսական պահանջներն իրենք են առաջադրում բանվորական նախաձեռնությունը պլանավորելու համար անհրաժեշտությունը: Կատարելագործման հրահանգները, ամխահատներին տրվող սոցիալիստական պատվերը լեռնային կոմբայն հնարելու համար—սրանք այդպիսի պլանավորման կոմբայն հնարելու համար: Ատարելագործել, ուսենց կյանքի առաջադրած ձեռն են: Կատարելագործել, ուսենց կյանքի առաջադրած անևլ պետք է վոչ թե ընդհանրապես, ցիոնալացնել, գյուղատարար անևլ կոնկրետ պահանջների համաձայն: Բանալ արտադրության կոնկրետ պահանջների համաձայն: Բանավորական նախաձեռնությանը տրվող սոցիալիստական պատվերը մի կողմից կոնկրետացնում է բանվորների արտադրավերը մի կողմից կատարման ստուգումն է կոնկրետացնում նրան: Գյուղ կողմից, կատարման ստուգումն է կոնկրետացնում կազմակերպման ակտիվության ղեկավարությանը ճիշտ այնպես, ինչպես վում ենք, մեկ թույլ է տալիս գիտակցել գյուղատարարական օտեղծագործության բովանդակությունը, վորն առաջ ծածկված



եք անհասկանալիության մշուշով: Ասում են Նյուտոնը հայտնաբերեց ձգողականության որենքը, գիտելով ծառից ընկնող խնձորը: Ներշնչումը, ստեղծագործական վողիկն, բանվոր—գյուտարարի վրա չեն իջնում ինչ—վոր վերևից, ընկնող խնձորների հետ միասին: Ստեղծագործական միտքը ծագում է արդֆինսպլանի համար նրա մղած պայքարի պրոցեսում, նա արդֆինսպլանի արդյունքն է ճիշտ այնպես, ինչպես և արդֆինսպլանը միլիոնավոր կառուցողների ստեղծագործության արդյունքն է:

Բանվորների ստեղծագործական մտքի պլանավորումը մտնում է գիտության պլանավորման մեջ, իբրև մեծ, բաղկացուցիչ մաս: Անհատ—գյուտարարը, վորը համակված է մշտական շարժիչ իգեակով, արդեն անցյալ է դառնում: Բանվորների բաղմանագոր կողեկտիվը համախմբվում է ստեղծագործությամբ լուծելու մի վորեն տեխնիկական պրոբլեմ, վորն առաջադրված է գիտական տվյալների հիման վրա: «Իոնստոլ» գործարանը կոլեկտիվ կերպով վճռում է սողայի արտադրության վերակառուցման խնդիրը, Իոնբասի հարյուրավոր բանվորներ ու մասնագետներ մտածում են լեռնային կոմբայնի մասին: Այստեղ հարկավոր է նաև փորձի մասսայական փոխանակություն, իսկ դա, պետք է ասել, վոր վատ է դրված: Մասսաների մասնակցությունն ու վերահսկողությունը կկանխե ֆլասակար ուտոպիզմը, վորն ուշադրությունն է ուլծերը մոտակա խնդիրներից տեղափոխում է դեպի գեղեցիկ, հրապուրիչ, հսկայական, բայց առայժմ անիրագործելի նախագծեր:

Ստեղծագործական մտքի աշխատանքի ճիշտ պլանավորումը վերացնում է այդպիսի ուտոպիստական «խոտորումների» հնարավորությունը: Բայց դրա հետ միաժամանակ նա բուրբուզին էլ չի վերացնում, այլ միայն խրախուսում է ստեղծագործական թափի հայտնաբերումը, թեկուզ և այդ թափը կուպված լինի վորոշ վտանգի հետ: Ասպայման ճիշտ են և ամբողջ ստեղծագործական, գյուտարարական գորհնեղության համար կիրառելի յեն ընկեր Մոլոտովի խոսքերը, վոր նա ասել է գիտության պլանավորման կոնֆերենցիայում.—

«Համարձակ նախածեռնության զարգացումը, հետեվապես և վորոշ ոխկ թույլ տալը գիտական—տեխնիկական աշխատանքում, անպայման անհրաժեշտ է: Նա, ով չի ուզում դանազանել ֆլասարտրի չարամիտ դիտա-

վորությունը գիտական—տեխնիկական գործիչի աշխատանքում որինական ոխկից, նա վոչ միայն նորմալ պայմանն ըրի մեջ չի դնում տեխնիկի և ինժեների աշխատանքն, այլ և ուղղակի ֆլասս է հասցնում խորհրդախատանքն, այլ և ուղղակի շահերին: Գիտական—հետազոտական յին իշխանության շահերին: Գիտական—հետազոտական ինստիտուտները և գիտության ու տեխնիկայի առանխնստիտուտները և գիտության ու տեխնիկայի առանխետք և գտնեն ամեն տեսակ աջակցություն՝ գիտական—տեխնիկական բնագավառում իսկական ու համարձակ նախածեռնության զարգացման համար պայմանները բարելավելու գործում»:

Առավել արդարացի յեն այս խոսքերը բանվոր—գյուտարարների համարձակ տեխնիկական նախածեռնության վերաբերմամբ: Այստեղ թերևս կարելի յե սպասել նախագծի թեբերմամբ: Այստեղ թերևս կարելի յե կարելի սպասել չարամիտ բաժնակում, բայց վոչ մի կերպ չի կարելի սպասել չարամիտ գիտավորություն: Պետք է ի նկատի ունենալ վոր տեխնիկապիտավորություն արդեն դառնում է մասսաների համար գորյին տիրապետելն արդեն գառնում է մասսաների համար գործնական խնդիր: Արտադրության գիտությունը դեռ չի դարձել միլիոնների գործը: Նրա տերիտորիայի վրա առայժմ յեղել են միայն առաջին հետախուզական ջոկատները: Մակայն նրանք արդեն լուր են բերել, վոր Վերքերն այնքան էլ անմատչելի չեն»:

Այդ պայմաններում բանվորների արտադրական նախածեռնության ղեկավարությունը դառնում է ղժվարին, պատասխանատու գործ: Արհմիությունները շրջադարձ կատարեցին դեպի արտադրությունը: Մակայն այդ շրջադարձը չի կարող լինել իրականար առանց շրջադարձ կատարելու դեպի արտադրության տեխնիկան:

Պլանի ներդաշնակումը բանվորական առաջարկների կատարման ստուգման հետ, հեղափոխական խիզախության ներդաշնակումն այսորվա խնդիրների լուծման գործնական դրույթի հետ՝ պահանջում է ստեղծել պրոֆաշխատողի մի տիպ, վորը ղինված լինի իր արտադրության տեխնիկայի խորը գիտությամբ: Այժմ արտադրական նախատադրությունը, այլ—դեպի տվյալ արտադրությունն իր յետամնաց տեխնիկայով, վորը պետք է վերակերտել, ոգավելով

հեղափոխական մեթոդներով, վորոնք մշակված ու ստուգված են սոցիալիստական շինարարութեան պրակտիկայում: Իսկ վերակերտել հարկավոր է ինչ կերպ էլ լինի:

«Ամենաշատը տասը տարում մենք պետք է անցնենք այն տարածությունը, վորով մենք յետ ենք մնացել կապիտալիզմի առաջավոր յերկրներին: Իրա համար մեզանում կան բոլոր «ոքեկտիվ» հնարավորությունները: Պակասում է միայն այդ հնարավորություններն ինչպե՞ս պետք է ոգտագործելու կարողությունը: Իսկ այդ կախված է մեզանից: Միայն մեզանից» (Ստալին):

Տեխնիկական մեղ է պատկանում: Պետք է սովորել նվաճել նրան:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

1. Առաջին խնդիրը լուծված է . . . . .	1
2. Մեքենայի նոր ծնունդը . . . . .	3
3. Հին տեխնիկան նոր հիմունքով . . . . .	5
4. Ճանապարհ դեպի ավտոմատը . . . . .	8
5. Ուսումնասիրիր ջո արտագրությունը . . . . .	10
6. Ստրուկը կոնվեյերն է, թե նրա տերը . . . . .	13
7. Մի գործի յերկու կողմը . . . . .	16
8. Աշխատանքի և տեխնիկայի հարստացումը . . . . .	17
9. Ինչ՞ու հանքագործները հաղթեցին . . . . .	22
10. Գլխավոր ողակը . . . . .	29
11. «Անկարգություն» գաղտնիքը . . . . .	32
12. «Իրեղեն ապացույցների» ցուցակ . . . . .	35
13. «Անկարգություն» փաստարարական բնույթը . . . . .	39
14. Կապերը վերականգնվում են . . . . .	41
15. Մեռածը—կենդանու դեմ . . . . .	46
16. Ստիպենք մեքենային ծառայել անդադար . . . . .	50
17. Ստեղծագործական ենթգիայի անսպառ աղբյուրը . . . . .	52
18. Բանվորի ստեղծագործական պարտքը . . . . .	56
19. Ինչպե՞ս ղեկավարել գյուտարարությունը . . . . .	59
20. Յերեսով դեպի արտագրություն տեխնիկան . . . . .	61

2013

«Ազգային գրադարան»




11958  
NL0045804

Ответственный редактор  
А. Г. ЯВАКИАН  
За технического редактора  
ГЮЗАЛЯН

№ 77  
1932

Сд. в набор 7/XII—1931 г.  
Сд. в печать 22/XII—1931 г.  
Об'ем 2 печ. листа  
Тираж 2000 экз.



Цена & Огол.

Н. П. З. О



На армянском языке

М. Байтальский

**ОВЛАДЕЕМ ТЕХНИКОЙ ПРОИЗВОДСТВА**

Из-во «СЕВЕРНЫЙ КАВКАЗ»

1932

Ростов-Дон